# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 26 (1726) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 11, 2015
VOLUME 35, NO. 26 (1726) SATURDAY, JULY 11, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## «Էրտողանին Երբեք Պիտի Չներեմ Հայերը Վիրաւորելուն Համար»
### Ըսած է Թուրքիոյ Խորհրդարանի Հայ Կին Անդամը



Թուրքիոյ խորհրդարանի անդամ՝ Սելինա Տողան

*Թուրքիոյ խորհրդարան մուտք գործած հայ կին պատգամաւոր Սելինա Տողան յայտարարած է, թէ երբեք պիտի չներէ նախագահ Էրտողանին՝ «Կը ներէք, ինծի նոյնիսկ հայ ըսած են» խօսքին համար:*

*Ընդդիմադիր «Ժողովրդա-Հանրապետական» կուսակցութեան ցուցակով պատգամաւոր ընտրուած Սելինա Տողան յայտարարած է, թէ ինք պիտի գործէ ոչ միայն հայերու, այլեւ ազգային փոքրամասնութիւններու միւս ներկայացուցիչներուն համար:*

*Սելինա Տողան ըսած է, թէ Թուրքիոյ համար լրջագոյն խնդիրներէն է այլատեացութիւնն ու ազգային փոքրամասնութիւններու ներկայացուցիչներուն հանդէպ խտրականութիւնը:*

*Անդրադառնալով նախագահ Ռեճէփ Թայիփ Էրտողանի կողմէ հայերու նկատմամբ վիրաւորական արտայայտութիւններուն, Սելինա Տողան շեշտած է. «Երբ հանդիպիմ Էրտողանին, պիտի ըսեմ. «Կը ներէք, ես հայ եմ» :*

*Միւս կողմէ, վերջին օրերուն Թուրքիոյ ազգայնամոլական շրջանակներու կողմէ հայ պատգամաւորներու եւ հայ արուեստագէտներու նկատմամբ վիրաւորական եւ ցեղապաշտական յայտարարութիւններուն դէմ հանդէս եկած են Թուրք յառաջադէմ մտաւորականները:*

*«Անգարայի Միտքի Ազատութեան» նախաձեռնութեան կողմէ յայտարարութիւն մը տարածուած է, որ խիստ քննադատութիւն կը հնչեցնէ վերջին շրջանին «Ազգայնական Շարժում» կուսակցութեան շարք մը քաղաքապետերուն կողմէ հայ պատգամաւորներու եւ համերգներով Թուրքիա մեկնած հայ երաժիշտ Տիգրան Համասեանի հասցէին վիրաւորական ու սպառնալից յայտարարութիւններուն կապակցութեամբ:*

*Նախաձեռնութեան կողմէ տարածուած յայտարարութեան տակ ստորագրած են մօտ երկու հարիւր Թուրք մտաւորականներ, արուեստագէտներ, իրաւաբաններ եւ քաղաքական գործիչներ:*

*«Ազգայնական Շարժում» կուսակցութեան անդամ, Ատանայի քաղաքապետը վիրաւորած էր խորհրդարան ընտրուած հայ պատգամաւորներուն՝ փորձելով շահարկել Թուրքիոյ հասարակաց տուներու ցանցերու նախկին սեփականատէր Մաթիլտա Մանուկեանի անունը: Իսկ Կարսի քաղաքապետը խիստ կատաղած էր, որ հայ երաժիշտը համերգով հանդէս եկած էր Անիի աւերակներուն մօտ:*

## Ռուսաստանի եւ Հայաստանի Միջեւ Բանակցութիւններ՝ Արդիական Հրթիռներ Մատակարարելու Շուրջ



«Իսկանտեր-Մ» տեսակի հրթիռներու մէկ օրինակը

*Ռուսաստան Հայաստանի հետ բանակցութիւններ կը վարէ «Իսկանտեր-Մ» տեսակի հրթիռային համակարգեր մատակարարելու շուրջ, բայց պայմանագիրը տակաւին ստորագրուած չէ: Այս մասին ռուսական պետական ԹԱՍՍ լրատուական գործակալութեան յայտնած է Ռուսաստանի ռազմական արտադրութեան բնագաւառի մէկ աղբիւրը՝ շեշտելով, որ նման համաձայնագրերու վերաբերեալ ամբողջ տեղեկատուութիւնը գաղտնիք է:*

*Աւելի կանուխ, «Իսկանտեր» հրթիռներու արտադրութեան գրասենեակը յայտարարած էր, որ մինչեւ 2016 թուականը «Իսկանտեր» հրթիռային համակարգերը այլ երկիրներ պիտի չվաճառուին: Բայց այդ համակարգերը ընդգրկուած են այն սպառազինութիւններու ցանկին վրայ, որոնց վաճառքը արտասահմանի մէջ թոյլատրուած է: Անցեալ տարի Ղազախստանը հետաքրքրութիւն ցուցաբերած էր, իսկ այս տարուայ Յունիսին, Սէուտական Արաբիոյ պատուիրակութիւնը այցելած էր Մոսկուա, «Իսկանտեր» հրթիռային համակարգեր ձեռք ձգելու համար:*

*Միւս կողմէ, Հայաստանի Ազգային Ժողովը վաւերացուց Ռուսաստանէն 200 միլիոն տոլարի վարկ ստանալու պայմանագիրը, որ նախատեսուած է ռուսական արտադրութեան նորագոյն սպառազինութիւններ գնելու համար:*

*Քննարկումներու ընթացքին Հայաստանի պաշտպանութեան փոխնախարար Արա Նազարեան յայտարարեց, որ այդ վարկէն ոչ մէկ կոպեկ ուրիշ ծախսեր փակելու նպատակներով պիտի չօգտագործուի: Ան նաեւ յայտնեց, որ Հայաստանի Զինուած Ուժերը նորագոյն սպառազինութիւններ կ'ունենան, ինչ որ էական նշանակութիւն կ'ունենայ տարածաշրջանի ռազմական հաւասարակշռութեան համար:*

*Վերջին տարիներուն բազմամիլիոն տոլարներու հասնող ռուսական զէնքի վաճառքը Ատրպէյճանին, դժգոհութիւն յառաջացուցած էր Հայաստանի մէջ:*

### Միջազգային Կազմակերպութեան Համաձայն
## Հայաստանի Օլիկարքները Կը Վայելեն Տնտեսութեան Պտուղներու Մեծ Մասը

*Քաղաքական փտախտի եւ կաշառակերութեան դէմ պայքարող «Թրէնսփարընսի Ինթըրնէշընըլ» միջազգային յայտնի կազմակերպութեան կողմէ հրապարակուած զեկոյցին համաձայն, Հայաստանի մէջ կոռուպցիայի առանձնայատկութիւնը օլիկարքներն են, որոնք կը վայելեն համախառն ներքին արդիւնքի մօտ 35 տոկոսը կազմող՝ ստուերային տնտեսութեան պտուղները:*

*Հեղինակաւոր կազմակերպութեան գնահատմամբ, հզօր լծակներ ունեցող Հայաստանի նախագահը եւ իշխող քաղաքական վերնախաւը սերտաճած են պիզնէսի հետ, երկրէն ներս կը գերակայեն մենաշնորհները եւ հովանաւորչութիւնը:*

*«Մասնաւոր եւ պետական հատուածի միջեւ յստակ տարանջատման բացակայութիւնը էապէս կը խոչընդոտէ հակակոռուպցիոն ջանքերուն: Զարմանալի չէ, ըստ այդ, որ Հայաստանի բնակչութեան 82 տոկոսը համոզուած է, որ կոռուպցիան պետական համակարգէն ներս խնդիր է, կամ լուրջ խնդիր»:*

*«Թէ՛ նախագահը, թէ՛ նախկին ու գործող վարչապետները, թէ՛ խորհրդարանի մեծամասնութիւնը նոյն կուսակցութեան անդամ են, այդպիսով Հանրապետականը, նախագահն ու գործադիրը կը նոյնացուին», - կը գրեն կազմակերպութեան մասնագէտներ ու կ'եզրակացնեն. - «Այս նոյնացումը երկրի նախագահին հնարաւորութիւն կու տայ միահեծան կերպով որոշումներ կայացնելու եւ վերջնական խօսքի իրաւունք ունենալու պետական գրեթէ բոլոր կարեւոր հարցերուն մէջ»:*

*Այս պայմաններուն տակ, ըստ զեկոյցին, Հայաստանի անցումը ժողովրդավարական համակարգ կը մնայ ոչ ամբողջական:*

## Հայաստանի Ոստիկանութիւնը Ցրուեց Բաղրամեան Պողոտայի Ցուցարարները

*Յուլիս 6-ին, Հայաստանի ոստիկանները ուժ կիրառելով ցրուեցին ելեքտրական հոսանքի թանկացման դէմ պայքարող ցուցարարները, բանալով Բաղրամեան պողոտան:*

*Մինչեւ ցոյցը ցրուելը, ոստիկանները յայտարարեց, որ ցուցարարներուն պարզապէս պիտի հեռացնեն փողոցի երթեւեկելի հատուածէն եւ յորդորեցին անոնց, ցոյցը շարունակել Ազատութեան Հրապարակին վրայ: Ցուցարարները, որոնք այդ պահուն 100-200 հոգի էին, մերժեցին հեռանալ եւ նստեցան գետնին: Բաղրամեանի վրայ եղող տարբեր ստորաբաժանումներու հարիւրաւոր ոստիկաններ գործի անցան: Ի տարբերութիւն Յունիսի 23-ի՝ ոստիկանութիւնը այս անգամ ցոյցը ցրուելու համար չօգտագործեց ջրցան մեքենաներ:*

*Նոյն օրը երեկոյեան ցուցարարները հաւաքուեցան Ազատութեան Հրապարակին վրայ:*

*Խումբ մը երիտասարդներ կը շարունակեն հացադուլ կազմակերպել, իսկ «Ոչ Թալանին» շարժումի երկուքի բաժնուած անդամներու մէկ մասը կը խոստանան շարունակել հանրահաւաքները, նպատակ ունենալով դարձեալ վերադառնալ Բաղրամեան պողոտայ:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Եւրոպական խաղերից յետոյ հետեւում են Ալիեւի «խաղերին»

**ՄԵՏԱՔՍԻԱ ՇԱԼՈՒՆՑ**

Ատրպէյճանում ԱՄՆ դեսպան Ռոբերտ Սեկուտան լրագրողների հետ զրոյցում յայտարարել է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները մօտ ժամանակներս կը ժամանեն տարածաշրջան: «Այցի ստոյգ ժամկէտը դեռ յայտնի չէ ինձ: Համանախագահները, որոնք Պաքւում մասնակցել են Եւրոպական առաջին խաղերի բացման արարողութեանը, պայմանաւորուել են մօտ ժամանակներս այցելել տարածաշրջան»,- ասել է նա:

Սեկուտան մեկնաբանել է օրեր առաջ ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից աշխարհի երկրներում մարդու իրաւունքների շուրջ տիրող իրավիճակի մասին զեկոյցի հրապարակումը, որում անդրադարձ է կատարուած նաեւ Ատրպէյճանում մարդու իրաւունքների ոլորտում առկայ խնդիրներին: «Հաշուետուութիւնը պատրաստուել է երկար ժամանակ, եւ այնպէս է ստացուել, որ դրա հրապարակումը համընկել է Ատրպէյճնում Եւրոպական առաջին խաղերի անցկացման հետ: Սակայն դա կապուած չէ Եւրոպական խաղերի հետ: Ի դէպ, ես հետեւել եմ Եւրոպական խաղերի ընթացքին: Դրանք կազմակերպուել են բարձր մակարդակով»,- ասել է դեսպանը:

Յիշեցնենք, որ Ատրպէյճանում մարդու իրաւունքների շուրջ իրավիճակի մասին ԱՄՆ պետդեպարտամենտի զեկոյցում նշուած էր, որ Ատրպէյճանում խնդիրներ կան ազատ արտայայտուելու, ազատ հանրահաւաքներ անցկացնելու, աշխատանքային իրաւունքների ու փոքրամասնութիւնների իրաւունքների ոլորտներում: Մարդու իրաւունքների ոլորտում միւս խնդիրների թւում նշուել են բանակում ֆիզիքական բռնութիւնները, կտտանքները կամ բանտերում առկա չարաշահումները, կեանքի համար վտանգաւոր պայմանների առկայութիւնը, առանց թոյլտուութեան ձերբակալութիւնները: Զեկոյցում, վկայակոչելով տեղի եւ միջազգային ՀԿ-ները, նշուած էր, որ Ատրպէյճանում քաղբանտարկեալների թիւը կազմում է 24-135 մարդ: Զեկոյցի համաձայն՝ Ատրպէյճանի բանտերում կան 12 լրագրող ու բլոգեր, իսկ թերթերի ու լրագրողների դէմ տուգանքների ընդհանուր ծաւալը կազմել է 255.000 մանաթ: Զեկոյցը յարուցել էր Ատրպէյճանի իշխանութիւնների խոր դժգոհութիւնն ու սուր արձագանքը:

Ոչ միայն ԱՄՆ պետդեպն ու ամերիկացի դիւանագէտների դիրքորոշումն է գայրոյթ առաջացրել, այլեւ եւրոպացի փորձագէտներն եւ մեկնաբանները շարունակում են ընդարձակ վերլուծութիւններով եւ մեկնաբանութիւններով: Ատրպէյճանը կարող էր մրցանակ ստանալ մամուլի ազատութիւնը ճնշելու համար: Պաքւում տեղի ունեցող Եւրոպական խաղերի ընթացքում, երբ պէտք էր համերաշխութիւն եւ ըմբռնում դրսեւորել, լրագրողները ստիպուած էին պայքարելու ճնշումների դէմ, գրում է Frankfurter Allgemeine պարբերականը:

«Պաքուի իշխանութիւնները պէտք է վերջապէս յարգեն մարդու իրաւունքները, ինչպէս նաեւ իրենց երկրում ազատ արտայայտուելու եւ մամուլի ազատութեան իրաւունքները: Եւրոպական խաղերի աւարտից յետոյ եւս մենք ուշադիր հետեւելու ենք երկրում տիրող իրավիճակին եւ շարունակելու պայքարը՝ ձերբակալուած լրագրողներին ազատելու համար»:

Դեռ խաղերը չսկսած՝ ատրպէյճանական իշխանութիւնները հանդէս եկան բռնաճնշումների հզօր ալիքով գրեթէ բոլոր անկախ լրագրողների եւ ընդդիմադիր լրատուամիջոցների նկատմամբ: Այսպէս, 2014թ. Դեկտեմբերի 5-ին ձերբակալուեց յայտնի հետաքննող լրագրող Խադիջա Իսմայլովան, ով յայտնի էր իշխանութեան բարձր շրջանակներում իր հետազօտութիւնների համար: Քննադատող լրատուամիջոցների մեծ մասը լռեցուեցին:

Երկրի կարեւորագոյն ընդդիմադիր թերթը՝ «Azadliq»-ը պետական ճնշումների պատճառով իր ծախսերն այլեւս չկարողացաւ եւ, ամենայն հաւանականութեամբ, կը դադարեցնի իր աշխատանքները: Առնուազն ութ լրագրողներ եւ չորս բլոգերներ յայտնուեցին ճաղերի հետեւում այդ աւտորիտար կառավարուող երկրում:

Իշխանութիւնները զգուշացնում էին նաեւ խաղերին մեկնող լրագրողներին. 2015թ. Ապրիլին Արտաքին գործերի նախարարութիւնը յայտարարեց, որ արտասահմանեան լրագրողները, ովքեր կը զեկուցեն Ատրպէյճանի «շահերի դէմ» կամ «խեղաթիւրուած տեղեկատուութիւն» կը տարածեն, անմիջապէս կը զրկուեն հաւատարմագրումից: Նպատակը մէկն էր. հնարաւորինս քիչ քննադատութիւն թոյլատրել:

Երկու արտասահմանեան սպորտային լրագրողներ մերժուեցին ռեպորտաժ պատրաստելու մէջ: Ինչպէս «ARD»-ի սպորտային լրագրող Ֆլորիան Բաուերը, այնպէս էլ բրիտանական «The Guardian» թերթի սպորտային գլխաւոր խմբագիր Օուեն Գիբսոնը, ովքեր ցանկանում էին հաւատարմագրում ստանալ, մերժուեցին:

Գերմանիայի Բունդեսթագը Եւրոպական խաղերի բացման օրը հրապարակեց զեկոյց Ատրպէյճանում մարդու իրաւունքների դրութեան մասին, որի համաձայն, պարբերաբար ոտնահարւում են ազատ արտայայտուելու, ԶԼՄ-ների, կրօնական, հաւաքների անցկացման, միութիւնների ստեղծման ազատութիւնները: Խորհրդարանականները կոչ էին անում Դաշնային կառավարութեանը հանդէս գալ Ատրպէյճանում քաղբանտարկեալների ազատ արձակման կողմ եւ Պաքուի իշխանութիւններից պահանջել արտասահմանեան լրագրողներին եւ ինտերնետի ակտիւիստներին թոյլ տալ օգտուելու մամուլի ազատութիւնից»:

«ՀԱՅԵԼԻ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# Ինչը եւ որքան ժամանակով է իշխանութեանը փոխել

**ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԹԱՊՑԻ**

Գնա՛լ նորից Բաղրամեան փողոց, թէ չգնալ. ըստ էութեան, այս շեքսպիրեան հարցն է երեւի թէ կազմելու հասարակական մտորումների առանցքը Յուլիսի 6-ի կէսօրին ոստիկանական գործողութիւններից յետոյ, որոնց արդիւնքում բացուեց 14 օր շարունակ փակ մնացող պողոտան:

Մի բան յստակ է՝ Բաղրամեան փողոցում տեղի ունեցածը մի հանգրուան էր, որից յետոյ Հայաստանում նոր իրավիճակ է ձեւաւորուել: Այդպիսի հանգրուաններ Հայաստանի հանրութիւնն արձանագրել է պարբերաբար՝ բարձրացուած խնդիրների յաջող լուծմամբ կամ չլուծմամբ: Բաղրամեան փողոցն այս առումով, անկասկած, բացառիկ չէր, սակայն առանձնայատուկ էր մի շարք նոր հանգամանքներով, որոնց մասին առիթ եղել է խօսելու, եւ անկասկած՝ դեռ կը խօսենք: Այսօր երեւի թէ խօսելու ժամանակը չէ, այլ աւելի շատ մտորելու կատարուածի շուրջ: Եւ մտորումների մի ուղղութիւնն էլ կարող է լինել իշխանութեան պահուածքը:

14 օր շարունակ իշխանութիւնները հանդուրժում էին քաղաքի կենդրոնական փողոցներից մէկի փակ լինելը: Միեւնոյն ժամանակ ակնյայտ էր, որ անգամ ոստիկանական գործողութեան պարագայում, այդ գործողութիւնն իր ուժային բաղադրիչի եւ ագրեսիւութեան առումով որեւէ համեմատութեան եզր չունէր նախկին, նոյնիսկ մի քանի օր առաջ նոյն փողոցում կիրառուած գործողութեան հետ, որ տեղի ունեցաւ Յունիսի 23-ին:

Այս ամէնը առաջացնում է Հայաստանի համար մի կարեւոր հարց. իշխանութիւնները դարձել են իսկապէ՛ս հանդուրժող եւ հրաժարուել են ուժային մեթոդների գերակայութիւնից, կամ աւելի ճիշտ՝ ամէն կերպ եւ ամէն գնով, ամէն միջոցով ուժային մեթոդաբանութեան գերակայութիւնից, թէ՛ պարզապէս իրավիճակը այնպիսին էր, որ չէր առաջացրել մեծածաւալ եւ աւելի ագրեսիւ ու կոշտ միջոցառումների կարիք:

Գործօնները միաժամանակ կարող են բազմաթիւ լինել, սակայն փաստը ինքնին, որ առկայ իրավիճակում իշխանութիւնների պահուածքը էապէս տարբերուել է նախկին տարիներից՝ ակնյայտ է:

Այստեղ խնդիրը բոլորովին էլ իշխանութիւններին բացայայտ կամ անուղղակի ողջունելը չէ նման պահուածքի համար: Նման պահուածքը նրանց պարտաւորութիւնն է Սահմանադրութեան, օրէնքի եւ պետութեան առաջ, ոչ թէ մեծահոգութիւնը: Նրանք ընդամէնը նման պահուածքով մի փոքր մօտենում են սահմանադրական կարգին:

Խնդիրը, սակայն, այն է, որ փաստը կարեւոր է եւ պէտք է ամրագրել՝ յետագայում լրջօրէն ուսումնասիրելու եւ հասկանալու համար: Ի վերջոյ անկասկած է, որ Հայաստանում եւ սոցիալական, եւ քաղաքական առումով դեռ բազմաթիւ անգամներ են միմեանց դէմ կանգնելու քաղաքացիներն ու իշխանութիւնները, դեռ բազմաթիւ առիթներ ու պատճառներ են լինելու դրա համար: Եւ այստեղ ուժային բաղադրիչի հանդէպ իշխանութիւնում առկայ մօտեցումները հասկանալը, այսպէս ասած՝ մանրազնին ուսումնասիրելը, տնտղելը կարող են էական նշանակութիւն ունենալ քաղաքացիական պայքարի արդիւնաւէտ մարտավարութեան, մարտավարութեան յետագայ կատարելագործման, իշխանութիւնների հանդէպ պահանջների ներկայացման ձեւերի, ձեւակերպումների, մեթոդաբանութեան մշակման հարցերում :

Վերջին հաշուով՝ բռնութիւնը, ուժը Հայաստանի իշխանութիւնների տարերքն ու բնոյթն են, եւ հետեւաբար առանցքային այդ հանգամանքի առումով արձանագրուած փոփոխութիւնները հասկանալը գերկարեւոր է, պարզելը գերկարեւոր է, քանի որ դրանով կը պարզուի, թէ ինչ փոփոխութիւններ են առկայ իշխանական համակարգի բնոյթում, առկայ՝ են արդեօք, եթէ՝ այո, ապա ի՞նչ գործօնների ու հանգամանքների շնորհիւ, որքանո՞վ էն դրանց թուին պատկանում, այսպէս ասած, արտահամակարգային, արտաիշխանական միջավայրի գործօնները, եւ որքա՞ն են համակարգային գործօնները, ներիշխանական գործօնները, որ կարող են արտայայտուել իշխանութեան ներսում ուժերի դասաւորութեան որոշակի փոփոխութեամբ, նաեւ լինել նման փոփոխութիւնների ինդիկատոր:

Հասարակութիւնն առնուազն մարտավարական նկատառումներից ելնելով՝ պարտաւոր է այդ հարցերում լինել առաւել իրազեկ՝ իր մարտավարութիւնում առաւել կոմպետենտ լինելու համար:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Արդարադատութեան Նախարարը Յունիսի 23-ի Բռնութիւնների Վերաբերեալ Գնահատական Չունի

*Յունիսի 23-ին Բաղրամեան պողոտայում ոստիկանութեան բռնութիւնների վերաբերեալ արդարադատութեան նախարար Յովհաննէս Մանուկեանը գնահատական չունի:*

*«Ազատութեան» հետ զրոյցում նախարարը հակիրճ էր .- «Չունեմ ես գնահատական այս պահին»: Իսկ հարցին, թէ ի՞նչ գնահատական կը տայ Յուլիսի 6-ին ոստիկանութեան՝ Բաղրամեան պողոտայից ցոյցը ցրելու գործողութիւններին, Մանուկեանը գրեթէ նոյն պատասխանը հնչեցրեց. - «Չունեմ գնահատական. գործողութիւն է տեղի ունեցել, ազատուել է պողոտան, ընդամէնը այսքանը»:*

*Յունիսի 23-ին Բաղրամեան պողոտայում ոստիկանների գործողութիւնների կապակցութեամբ Յատուկ քննչական ծառայութիւնն քրէական գործ է յարուցել, իսկ Ոստիկանութիւնում դրութեամբ ծառայողական քննութիւնը շարունակւում էր:*

*Մինչդեռ, մարդու իրաւունքների պաշտպան Կարէն Անդրէասեանը հրապարակեց տեղի ունեցածի վերաբերեալ իր գնահատականը, ըստ որի՝ Յունիսի 23-ին Բաղրամեան պողոտայում եւ Ազատութեան հրապարակում ոստիկանութեան գործողութիւնները ոչ միայն «ոչ իրաւաչափ» էին, այլեւ՝ «ոստիկանները խախտել են օրէնքը»:*

*Յիշեցնելով, որ «Ոստիկանութեան մասին» օրէնքը պարտաւորեցնում է Ոստիկանութեան ծառայողներին հասարակական կարգը պահպանելիս համազգեստ կրել, Կարէն Անդրէասեանը նշել էր, որ բազմաթիւ ոստիկաններ ոչ միայն համազգեստով չէին, այլեւ ցուցարարներին բերման ենթարկելիս նրանց նկատմամբ կիրառել են բռնութիւն, որը «որեւէ կերպ պայմանաւորուած չի եղել կոնկրետ իրավիճակում ցուցարարների ագրեսիւ վարքագծով», բացի այդ՝ ցուցարարների հասցէին թոյլ են տուել հայհոյանքներ:*

*«Ոստիկանութեան ծառայողները խոչընդոտել են զանգուածային լրատուամիջոցների գործունէութեանը, ուժ գործադրել լրագրողների նկատմամբ եւ բերմ-ան ենթարկել նրանց, վնասել նրանց տեխնիկական միջոցները», - յայտարարել էր օմբուդսմենը:*



*Հայաստանի արդարադատութեան նախարար Յովհաննէս Մանուկեան*

# «Շարժումը Չի Մարել, Այլ Անկում Է Ապրել». Իրաւապաշտպան Աւետիք Իշխանեան

*Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դէմ մղուող շարժումը չի մարել, այլ անկում է ապրել երիտասարդների անփորձութեան հետեւանքով: Այս մասին Յուլիսի 8-ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց Հայաստանի Հելսինկեան կոմիտէի նախագահ Աւետիք Իշխանեանը:*

*«Շատ գեղեցիկ ու անսպասելի շարժում էր, պէտք չէ գնահատականներ տալ, թէ երիտասարդներն ինչն են ճիշդն արել եւ ինչը՝ սխալ: Նրանց համար դժուար էր, դեռ անփորձ էին, բայց երիտասարդները մատ արեցին իշխանութիւններին եւ բոլորիս: Եկէք չասենք, որ այս շարժումը մարել է, այն ուղղակի անկում է ապրել»,- ասաց Իշխանեանը:*

*Իրաւապաշտպանն անդրադառնալով Յունիսի 23-ի Բաղրամեան պողոտայում ոստիկանների գործողութիւններին, նշեց, որ իրենց Հայաստանի Հելսինկեան Կոմիտէն ցուցարարներին բռնութեան ենթարկելու վերաբերեալ զեկոյց է հրապարակել, որտեղ ոստիկանների գործողութիւնները որակել են անհամաչափ. «Ոստիկանութեան գործողութիւնները պարզապէս վայրենութիւն էին եւ հակասում էին խաղաղ հաւաքների նորմերին»:*



*Հելսինկեան կոմիտէի նախագահ Աւետիք Իշխանեան*

*Աւետիք Իշխանեանը Բաղրամեան պողոտայից Յուլիսի 6-ին, ցուցարարներին բերման ենթարկելու գործողութիւնները համաչափ եւ զուսպ գնահատեց՝ աւելացնելով, որ ոստիկանները քաղաքական որոշմամբ են ցուցարարների նկատմամբ բարեկիրթ գտնուել:*

*«Նրանք միայն մինչեւ ոստիկանական մեքենաներն են իրենց զուսպ պահել, ունենք տուեալներ, որ ցուցարարների նկատմամբ ոստիկանական մեքենաներում ուժ են կիրառել»,-ասաց նա:*

# Ապրանքների Ներմուծումը Ռուսաստան Նուազել Է 39 Տոկոսով

*Ռուսաստանի տնտեսական ցուցանիշներին հետեւող փորձագէտներն ուշադրութիւն են հրաւիրում երկրի Մաքսային ծառայութեան հրապարակած վերջին տուեալներին, ըստ որոնց՝ ապրանքների ներկրումը նուազել է 39 տոկոսով՝ նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ:*

*Ռուսաստանը մի շարք ապրանքատեսակներ ներկրելու իրաւունքից զրկուել է Ղրիմի բռնակցումից յետոյ սահմանուած պատժամիջոցների հետեւանքով:*

*Անցեալ շաբաթ Երեւանում Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ տնտեսական համագործակցութեան միջկառավարական յանձնաժողովի 16-րդ նիստի ժամանակ Ռուսաստանի տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովը յայտարարել էր՝ «Ռուսաստանը հետեւողականօրէն օժանդակութիւն է ցուցաբերում Հայաստանի տնտեսութեանը»:*

*«Ազատութեան» հարցին՝ ինչպէ՞ս կարող է ներմուծման բնագաւառում ակնյայտօրէն անկում արձանագրած երկիրը «հետեւողականօրէն օժանդակել» մէկ այլ երկրի, տնտեսագէտ Վահագն Խաչատրեանը պատասխանեց. - «Չգիտեմ՝ տրանսպորտի նախարարը ինչ նկատի ունէր, որ ցուցաբերում է օգնութիւն, բայց տնտեսութեան մէջ եւ բիզնեսում կանոններ կան, որոնք օժանդակութիւն ցուցաբերելով՝ իրավիճակ չեն փոխում: Մեզ դժուար ժամանակներ են սպասւում: Պաշտօնական վիճակագրութիւնը՝ վճարային հաշուեկշիռը, հրապարակուել է մի քանի օր առաջ: Մեզ մօտ ներմուծումը կրճատուել է 36 տոկոսով, իսկ արտահանումը՝ 16 տոկոսով»:*

*Հարցին, թէ այս տուեալները կապ ունե՞ն Ռուսաստանի մաքսային ծառայութեան երէկ հրապարակած ցուցանիշների հետ, Վահագն Խաչատրեանը պատասխանեց՝ անմիջականօրէն: Տնտեսագէտի խօսքով, Հայաստանն իր ապրանքների աւելի քան 40 տոկոսը արտահանում էր Ռուսաստան:*

*«Մենք հիմա չենք կարողանում էնտեղ արտահանել խմիչք, մենք չենք կարողանում գիւղատնտեսական վերամշակուած արտադրանք արտահանել, եւ այլն: Այն, ինչ նախկինում արտահանում էինք, հիմա չենք արտահանում, կամ արտահանում ենք շատ քիչ քանակով», - նշեց նա:*

*Վահագն Խաչատրեանը նաեւ բացատրեց Ռուսաստան ներմուծուած ապրանքների ծաւալների կրճատման եւ Հայաստանից արտահանուող ապրանքների ուածալի նուազման կապը. - «Հայաստանից ապրանքներ արտահանել Ռուսաստան տնտեսապէս ձեռնտու չէ, որովհետեւ ռուսական ռուբլին 50 տոկոսով արժեզրկուել է հայկական դրամի նկատմամբ: Սա տնտեսագիտութիւն է»:*

# Ընդդիմադիր գործիչ. «Ո՛չ Թալանին»-ը Քաղաքական Պահանջների Կարիք Ունէր

*Մարդկանց մտքում, նրա խօսքով, այլ բան էր՝ քաղաքական պահանջների կարիք կար՝ նաեւ դրանով պայմանաւորելով քաղաքացիների մասնակցութեան հետզհետէ նուազումը էլեկտրաէներգիայի թանկացման բողոքի ցոյցերին:*

*Մարտիրոսեանը համարում է, որ իր գործն արեց նաեւ շարժման մասնատումը. - «Ողջունելով հանդերձ այդ շարժումը՝ իրականութեան մէջ, կարծես թէ, իր բովանդակութեանը չհամապատասխանեց եւ խոշոր հաշուով քաղաքական, հրապարակային շարժում չիրականացրեցին: Ընդհակառակը, մաքուր քաղաքական շարժումը ըստ էութեան սարքեցին նեղ սոցիալական ուղղուածութեան, որը քաղաքացիների կողմից մեծ հաշուով շատ մեծ ընդունելութեան չարժանացաւ»:*

*Հանրապետական Յովհաննէս Սահակեանը «Ո՛չ Թալանին» կարգախօսը քաղաքական չի համարում. - «Դա («Ո՛չ Թալանին») իրենց շարժման անունն էր, բայց նպատակը հենց այդ 7 դրամն էր: Եթէ 7 դրամը թալանել են, ես էլ եմ կողմ, որ՝ ո՛չ թալանին»:*

*Սահակեանը յաւելեց, թէ «ձեռքներն այս գործի վրայ տաքացնել» ցանկացողների չկարողացան հասնել քաղաքական պահանջներ դնելուն: Նրան ոգեւորել է յատկապէս առաջին երկու օրերին Բաղրամեանում տիրած մթնոլորտը. - «Որեւիցէ մի դեսպանատան, որեւիցէ մի երկրի ուղղուած չէր այդ երիտասարդների ազնիւ մղումը եւ պոռթկումը: Որովհետեւ գոնէ մէկ անգլերէն կամ ռուսերէն պաստառ մենք չտեսանք իրենց ձեռքում, այլ ընդամէնը ազգային, հայրենասիրական երգ ու պարի շնորհիւ ասում էին, որ այս թանկացումների համար ժողովուրդը չի վճարելու: Եթէ վճարելու է, ապա ասէք՝ ինչու: Նպատակը դա էր: Եւ իսկապէս դա ողջունելի է, որովհետեւ մեր գիտակցական կեանքում ես չեմ յիշում որեւիցէ մի հաւաք կամ երթ, որը քարոզի ազգային, հայրենասիրական որեւէ գաղափարախօսութիւն: Այս առումով ես հետեւել եմ, ուրախ եմ: Հոգուս խորքում նաեւ իրենց հետ եմ եղել»:*

*Բաղրամեան պողոտայում նստացոյցի օրերին իշխանութեան տարբեր ներկայացուցիչներ ակտիւիստներին կոչ էին անում տեղափոխուել Ազատութեան հրապարակ: Հիմա, երբ Բաղրամեանը բաց է, իսկ ցուցարարները՝ Ազատութեան հրապարակում, Յովհաննէս Սահակեանը գործընթացն աւարտուած է համարում, իսկ ցուցարարների պահանջները՝ կատարուած:*

*Բնակիչներն այս պահին 7 դրամով աւելի չեն վճարի էլեկտրաէներգիայի համար. - «Ես վստահ եմ նաեւ, որ ազգաբնակչութեան մի ստուար զանգուած չի իմանայ ինչ պահանջ է այսօր, որովհետեւ իւրաքանչիւր գործընթաց ունի իր գագաթնակէտը, ունի իր կուլմինացիոն ժամանակահատուածը, եւ դա եղաւ Բաղրամեան պողոտայում, իրենք հասան իրենց նպատակին: Եթէ վաղը կը լինի այլ որոշում, որի հետ համամիտ չեն լինի, կամ պատճառները կամ պատճառաբանութիւնը հաւաստի չի լինի, կը լինի այլ գործընթաց»:*

*Արմէն Մարտիրոսեանը Ազատութեան հրապարակի այսօրուայ պայքարի մասին ասում է՝ շարժումը վերելք չի ապրում: Նա համոզուած է, որ հետեւանքի համար պայքարելը ոչինչ չի տայ. - «Հնարաւոր է ինչ-որ մի պահ նորից վերելք ապրի, բայց դրա համար մի քանի քայլ է անհրաժեշտ: Կարգախօսները այնպիսին պէտք է լինեն, որը հնարաւորութիւն կը տայ քաղաքացուն զգալ, որ ինքը կարեւորագոյն գործընթացի մաս է կազմում, այլ ոչ թէ ինչ-որ հարցի հետեւանք են փորձում վերացնել, այն էլ՝ մասնակի: Եւ երկրորդը, միասնութիւն պէտք է լինի»:*

# ԼՈՒՐԵՐ

## Ռուս Քաղաքագէտ. «Ոչ Մի Երաշխիք Չկայ, Որ «Իսկանդերները» Չեն Ընկնի Բաքուի Վրայ»

Հայաստանում «Իսկանդերներ» տեղակայելու նպատակը Հարաւային Կովկասում Ռուսաստանի դաշնակցի անվտանգութեան ապահովումն է: Այս մասին haqqin.az-ին յայտարարել է ՌԴ քաղաքական եւ ռազմական ինստիտուտի վերլուծական բաժնի ղեկավար Ալեքսանդր Խրամչիխինը:

«Նպատակն անվտանգութեան ապահովումն է, իսկ թէ որ կողմից, դա երկրորդական հարց է: Հրթիռի վրայ հո գրուած չէ, թէ ում դէմ է այն ուղղուած՝ Թուրքիայի, Ատրպէյճանի, թէ՞ ԻՊ գրոհայինների: Հրթիռները ուղղուած են լինելու Հայաստանի ցանկացած թշնամու դէմ, այդ թւում՝ Ատրպէյճանի: Ի միջի այլոց Վրաստանը նոյնպէս այդ ցուցակում է, քանի որ այդ հանրապետութիւնը Ռուսաստանի հակառակորդն է եւ կարող է խոչընդոտել ռազմական տեխնիկան Հայաստան տեղափոխելուն»,- յայտարարել է ռուս ռազմական փորձագէտը:

Նա նաեւ յիշեցրել է, որ Ատրպէյճանը ժամանակին Ռուսաստանից գնել է Ս-300 ՊՄՈՒ-2 տեսակի 3 դիւիզիոն, որոնք կարող են պաշտպանել «Իսկանդերների» յարձակումներից:

«Այստեղ պէտք է մի կարեւոր մանրուք հասկանանք: Ամէն բան կախուած կը լինի իրավիճակի մարտավարութեան հաշուարկների նախապատրաստումից: Եթէ «Իսկանդերը» գործի դնեն յանկարծակի, ապա Ս-300 ՊՄՈՒ-2-ն չի հասցնի արձագանքել. այն ուղղակի չեն հասցնի միացնել: Եթէ պատերազմն արդէն ընթանում է, եւ դիւիզիոնները մարտական վիճակի են բերուել, ապա «Իսկանդերի» հարուածը կարելի է հետ մղել:

Ի միջի այլոց, ՆԱՏՕ-ն դժուար թէ ձեզ օգնի: Նախ Ատրպէյճանին ՆԱՏՕ չեն ընդունի: Դա բոլորն են հասկանում: Եւ յետոյ, ՆԱՏՕ-ի անդամ լինելը չի բարձրացնում ինչ-որ մեկի անվտանգութիւնը: Ենթադրենք, Ատրպէյճանը դարձաւ ՆԱՏՕ-ի անդամ, մի՞թէ դա երաշխաւորում է, որ «Իսկանդերը» չի ընկնի Բաքուի վրայ»,-

## Ռուս Վերլուծաբանը Հայկական Մամուլում Ռուսաստանի Նկատմամբ Ագրեսիա Է Արձանագրել

Ռուսաստանի Ռազմավարական հետազօտութիւնների կենտրոնը հրապարակել է «Ռուսաստանն այսօր» տեղեկատուական գործակալութեան վերլուծութիւնը ընթացիկ տարուայ Յունիսի 22-28-ը համաշխարհային մամուլում տեղ գտած՝ Ռուսաստանին վերաբերող նիւթերի մասին:

Համաձայն ներկայացուած աղիւսակի՝ Հայաստանը Ռուսաստանի նկատմամբ ագրեսիւ տրամադրուած տասը երկրների ցանկում հինգերորդ հորիզոնականն է զբաղեցնում. ցանկը գլխաւորում է Գերմանիան:

Այն, որ գերմանական մամուլը Կրեմլի ականջը չի շոյում, վերլուծութեան հեղինակը հասկանալի է համարում, միանգամայն նորմալ է համարում նաեւ բալթեան երկրներում ագրեսիան Ռուսաստանի նկատմամբ:

Հայաստանեան մամուլի ագրեսիային հեղինակն առանձին պարբերութեամբ է անդրադառնում՝ ընդգծելով չափազանց բացասական տոնը Ռուսաստանի նկատմամբ: «Այս երկրում, որի անվտանգութեան երաշխաւորը Ռուսաստանի Դաշնութիւնն է, ինչպէս գիտենք, հասարակութեան որոշակի մասը կոնֆլիկտի մէջ է իշխանութիւնների հետ՝ էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման պատճառով: Իհարկէ, տարօրինակ է, որ թոշակառուների դրամապանակի մասին անհանգստանում եւ փողոց է դուրս գալիս երիտասարդութիւնը, սակայն ինչ արած...», - մեկնաբանում է Իգոր Նիկոլայչուկը:

Հեղինակը մէջբերում է հայկական մամուլի իր գնահատմամբ ագրեսիւ մի քանի վերնագիր. ի դէպ, ուշագրաւ է, որ այդ վերնագրերը հիմնականում վերաբերում են երեւանեան վերջին ցոյցերի մասին ռուսական լրատուամիջոցների խեղաթիւրուած լրատուութեանը, ինչպէս, օրինակ, «Ժամանակ» թերթի «Երեւանեան ցոյցերն ու ռուսական սուտը» կամ Lragir.am էլեկտրոնայինի «Ռուսական լրատուամիջոցները հիստերիայի մէջ են» եւ նմանատիպ մի քանի այլ վերնագրեր:

Իհարկէ, նման յօդուածների թիւը մեծ չէ, իսկ փոքրիկ անդրկովկասեան հանրապետութեան մեղիայի մեքենան չես համեմատի Գերմանիայի կամ անգամ Իրանի հետ, սակայն ագրեսիւութեան ինդեքսը հաւասար է 12-ի, ինչը հինգ անգամ աւելի է, քան նոյն Գերմանիայում, բացատրում է փորձագէտը:

Վերլուծութեան համաձայն, արտասահմանեան մամուլում տեղ գտած՝ Ռուսաստանի նկատմամբ ամենաբացասական տրամադրուածութեամբ թեմաները վերաբերել են ՆԱՏՕ-ին, Ուկրաինային ու

## Բակօ Սահակեանը Ելոյթ Է Ունեցել Յայտնի «Չաթըմ Հաուս»-ում

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանը Յուլիսի 8-ին այցելել է Միջազգային յարաբերութիւնների թագաւորական ինստիտուտ (Չաթըմ Հաուս) եւ հանդէս եկել այնտեղ ելոյթով:

Երկրի ղեկավարն անդրադարձել է Արցախի պետականաշինութեանը, ներքին եւ արտաքին քաղաքականութեանը, ատրպէյճանա-ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորմանը եւ տարածաշրջանային գործընթացներին, պատասխանել բարձրացուած հարցերին:

Իր ելոյթում Նախագահ Սահակեանը նշել է, որ Արցախին հոգեհարազատ է Չաթըմ Հաուսի կարգախօսը՝ «Օգնել՝ կառուցելու անվտանգ, բարեկեցիկ եւ արդար աշխարհ», յաւելելով, որ այս գաղափարներն առկայ են նաեւ մեր աշխարհընկալման մէջ: Նախագահի խօսքով՝ նման հանդիպումներն օգտակար են թէ Արցախի, թէ տարբեր պետութիւնների եւ միջազգային կառոյցների համար:

## Էդուարդ Նալբանդեան. «Սիրիայում Բնակուող Հայերը Սիրիական Ժողովրդի Մաս Են Կազմում»

Սիրիայում բնակուող հայերը սիրիական ժողովրդի մաս են կազմում, որն այսօր շատ ծանր դրութեան մէջ է գտնւում: Այդ մասին ասել է Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը բրազիլական «Էստադաո» թերթին տուած հարցազրոյցում:




Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեան

Ըստ ԱԳ նախարարի, այս իրավիճակից ելք գտնելու համար անհրաժեշտ է, նախ եւ առաջ, դադարեցնել ռազմական գործողութիւնները: «Երկրորդ՝ հարկաւոր է երկխօսութիւն սկսել Սիրիայի բոլոր քաղաքական ուժերի մասնակցութեամբ՝ առանց բացառութեան: Երրորդ՝ պէտք է յարգել փոքրամասնութիւնների, ներառեալ՝ քրիստոնեայ փոքրամասնութիւնների, ներառեալ՝ հայ փոքրամասնութեան իրաւունքները: Չորրորդ՝ պէտք է համախմբել ուժերը՝ ահաբեկչութեան եւ ահաբեկչական խմբերի դէմ պայքարելու համար: Ահաբեկչութիւնը Մերձաւոր Արեւելքում՝ ներառեալ այսպէս կոչուած Իսլամական պետութիւն, Ալ-Նուսրա եւ այլ խմբերով հանդերձ, իրական վտանգ են ներկայացնում ոչ միայն փոքրամասնութիւնների, քրիստոնեաների, այլ ընդհանրապէս Մերձաւոր Արեւելքի ժողովուրդների համար եւ տարածաշրջանից դուրս: Միջազգային հանրութիւնը պէտք է համախմբի ջանքերը՝ ահաբեկչութեան դէմ իրենց պայքարում»,- նշել է նա:

Խօսելով սիրիահայերի գաղթի մասին՝ ԱԳ նախարարը նկատել է. «այսօր մենք Հայաստանում ունենք մօտ 14 հազար սիրիահայ: Որոշ այլ երկրներում փախստականների թիւը շատ աւելին կարող է լինել, սակայն փոքր Հայաստանի համար սա շատ մեծ թիւ է:

Եւ, իհարկէ, մենք փորձում ենք աջակցել նրանց, ովքեր գալիս են Հայաստան: Սակայն դեռ ունենք մեծ թիւով՝ տասնեակ հազարաւոր հայեր, ովքեր ապրում են Սիրիայում, այդ թւում՝ Հալէպում: Շատ բարդ է կոնկրետ թիւ ասել: Այդ պատճառով էլ մեր գլխաւոր հիւպատոսութիւնը երբեք չդադարեցրեց իր ծառայութիւնը Հալէպում եւ այսօր հանդիսանում է այնտեղ գործող միակ դիւանագիտական ներկայացուցչութիւնը: Իհարկէ, մենք ունենք նաեւ մեր դեսպանութիւնը Դամասկոսում:

Այդ երկրում ընթացող իրադարձութիւնների մասին տեղեկատուութիւնը մեզ հասնում է ոչ միայն դեսպանութիւնից եւ գլխաւոր հիւպատոսութիւնից, այլեւ՝ Սիրիայում բնակուող հայերից»,- նշել է նա:

## Բելգիայի Խորհրդարանի Յանձնաժողովը Հայոց Ցեղասպանութեան Վերաբերեալ Բանաձեւ Է Ընդունել

Բելգիայի խորհրդարանի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովն Յուլիսի 7-ին, իր նիստում Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւ է ընդունել: Այս մասին յայտնում է «Յանուն Արդարութեան եւ Ժողովրդավարութեան» Եւրոպական հայկական ֆեդերացիան:



Ընդունուել է խորհրդարանական մեծամասնութեան ներկայացրած բանաձեւը:

Քննարկումներից յետոյ մեծամասնութեան անդամների մասնակցութեամբ տեքստն ընդունուել է, բայց ոչ միաձայն: Սոցիալիստական կուսակցութիւնը, «Մարդասիրական ժողովրդավարական կենտրոն» կուսակցութիւնը եւ «Էկոլո»-ն ձեռնպահ են քուէարկել:

Ընդդիմութեան առաջարկած փոփոխութիւնները իշխող մեծամասնութիւնը մերժել է:

Խորհրդարանական մեծամասնութիւնը իր նախագիծն է ներկայացրել արտահերթ քննարկման, որը ցանկանում է, որ բանաձեւը խորհրդարանն ընդունի նախքան ամառային արձակուրդները՝ Յուլիսի 21-23-ին:

Սակայն բանաձեւի իրենց նախագծերն են ներկայացրել նաեւ «Մարդասիրական ժողովրդավարական կենտրոն» կուսակցութիւնը, Սոցիալիստական կուսակցութիւնը եւ «Ֆլամանդական շահ» կուսակցութիւնը:

Նշենք, որ Բելգիայի վարչապետ Շառլ Միշելը Յունիսի 18-ին երկրի Ներկայացուցիչների պալատում իր կառավարութեան անունից ճանաչել է Հայոց ցեղասպանութիւնը: «Ես կարծում եմ, որ 1915-1917 թուականների ողբերգական իրադարձութիւնները, որոնք նախաձեռնել էր Օսմանեան կայսրութեան վերջին կառավարութիւնը, պէտք է որակուեն որպէս ցեղասպանութիւնը»,-ասել էր Շառլ Միշելը:

Յիշեցնենք, որ Բելգիայի Սենատը յատուկ բանաձեւով Հայոց ցեղասպանութիւնը ճանաչել է 1998 թուականին:

www.massispost.com

## ՖՐԱՆՍԱ
## ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԲԱՑՈՒԱԾ Է




*Հայաստանի եւ Ֆրանսայի վարչապետները կը կատարեն վարժարանի բացումը*

Յուլիս 4-ին Ալֆորվիլ քաղաքին մէջ Հայաստանի եւ Ֆրանսայի վարչապետներ Յովիկ Աբրահամեանի եւ Մանուէլ Վալսի մասնակցութեամբ տեղի ունեցած է հայկական վարժարանի բացման արարողութիւնը, կը հաղորդէ ՀՀ կառավարութեան մամլոյ եւ հասարակութեան հետ կապի վարչութիւնը:

Վարժարանի բացումին ներկայ էին Ֆրանսայի ԱԺ նախագահ Քլոտ Պարթոլոն, ԿԳ նախարար Արմէն Աշոտեան, Սփիւռքի նախաօճախը եւս մէկ անգամ կ՛ազդարարէ, որ մեր ժողովուրդի բնաջնջումը ծրագրած Օսմանեան Կայսրութեան քաղաքականութիւնը ի դերեւ եղած է, որ հայերը կ՛ապրին եւ կ՛արարեն անկախ բնակութեան վայրէ: Մեր հայրենակիցները Ֆրանսայի մէջ կրցած են ընդելուզուիլ, դառնալ այս երկրի օրինապաշտ քաղաքացիներ, աշխատիլ եւ ստեղծագործել՝ ի բարօրութիւն իրենց երկրորդ հայրենիքի: Միաժամանակ, դուք ամուր կառչած մնացած



*Երեսփոխան Սեպուհ Գալփաքեան, Ֆրանսայի վարչապետ Մանուէլ Վալս եւ Ս.Դ.Հ.Կ.-ի ատենապետ Յակոբ Տիգրանեան*

րար Հրանոյշ Յակոբեան, Գիւղատնտեսութեան նախարար Սերգօ Կարապետեան, ԱԳ փոխնախարար Կարէն Նազարեան, Ֆրանսայի խորհրդարանի պատգամաւորներ, երկու երկիրներու դեսպանները, Ալֆորվիլի քաղաքապետը, ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներ, սրբազան հայրեր:

Յիշենք, որ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւն մը բաղկացած ընկերներ Յակոբ Տիգրանեանէ եւ երեսփոխան Սեպուհ Գալփաքեանէ, որ այդ օրերուն Փարիզ կը գտնուէին, մասնակցեցան նորակառոյց վարժարանի բացման հանդիսութեան:

Դիմելով ներկաներուն Յովիկ Աբրահամեան ըսած է. «Հայոց Ցեղասպանութենէ մազապուրծ հարիւր հազարաւոր հայերուն խաղաղ տանիք ու ապահով կեանք տուած եւ յաջորդող սերունդներուն հայրենիք դարձած Ֆրանսայի մէջ բացուող այս նոր կրթութեան էք ձեր արմատներուն, ձեր պատմութեան, ձեր մշակոյթին»:

Դպրոցաշինութեան, հայ մշակոյթի զարգացման եւ հայապահպանութեան գործին մէջ ներդրած նշանակալի աւանդի համար Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեան բարերար Գէորգ Արաբեանը պարգեւատրած է ՀՀ վարչապետի յուշամետալով:

«Այն փաստը, որ հայկական դպրոցի բացումը կը համընկ նի Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին, շատ կարեւոր եւ խորհրդանշական իմաստ ունի: Այս տարի Ֆրանսայի Նախագահը Ապրիլ 24-ին հայ ազգի կողքին էր՝ Երեւա նի մէջ:

Իսկ ես Փարիզի մէջ՝ Կոմիտասի յուշարձանի մօտ, եւս հայ ազգի կողքին էի: Ֆրանսայի համար շատ կարեւոր է ցոյց տալ, որ մենք հայերու կողքին ենք», նշած է Ֆրանսայի վարչապետ Մանուէլ Վալս:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## ԹՈՒՐՔԻԱ
## ՎԵՐՋ ԳՏԱՒ ՑԵՂԱՅԻՆ ԳԱՂՏՆԱԳԻՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ



Երեսփոխան ***Կարօ Փայլան եւ Կրթութեան նախարար Նապի Ավճըյի***

Ակօսի 1000-րդ համարին զուգադիպող բարեփոխումներէն մէկն է դպրոցներու արձանագրման ընթացքին գործադրուած ցեղային գաղտնագիրի վերացումը: Կրթութեան նախարար Նապի Ավճըյի ստորագրութեամբ հրատարակուած շրջաբերականը վերջ տուաւ քրիստոնեաներու դպրոցներէ ներս խտրականութիւն տածող ցեղային գաղտնագիրի գործադրութեան: Այսուհետեւ արձանագրութեան լիազօրութիւնը յանձնուած է դպրոցներու տնօրէնութեան: Բացի այդ, Թրքերէնով դասաւանդուած առարկաներու ուսուցիչներուն պաշտօնավարման տեւողութիւնն ալ պիտի ճշդուի տնօրէնութեան կողմէ:

Նախապէս ոչ իսլամ դպրոցներու արձանագրութիւնները կը վաւերացնէր քաղաքի կրթական տնօրէնութիւնը: Այս մարմինը կը քննէր դիմող աշակերտի անձնագրի տուեալները եւ ի պահանջեալ հարկին կը մերժէր արձանագրութիւնը: Նախորդ տարիներուն եղած էին դէպքեր, ուր Կրթական Տնօրէնութեան կողմէ մերժուած աշակերտներու ծնողները հազիւ դատական միջամտութեամբ յաջողած էին իրենց զաւակները հայ դպրոց ղրկել:

Նախապէս ալ այս մասին բաւական աշխատանք տարած ՀՏՓ-ի Իսթանպուլի պատգամաւոր Կարօ Փայլան, խորհրդարան ընտրուելէ ետք տեսակցեցաւ Նախարար Նապի Ավճըյի հետ եւ այս վերջինը համոզեց խնդիրը լուծելու համար շրջաբերականի մը բաւարար ըլլալուն մասին:

Այս տեսակցութենէ ետք Նապի Ավճըյի կարգադրութեամբ նախարարութեան պաշտօնակատարները եւ Կարօ Փայլան միասնաբար շրջաբերական մը պատրաստեցին որ ստորագրուեցաւ նախարարին կողմէ:

Բացի արձանագրութեան գործընթացի դիւրացումէն, Թրքերէն լեզուով դասաւանդուած առարկաներու ուսուցիչներն ալ այս նոր շրջաբերականով կ«ենթարկուին դպրոցի վարչութեան նախընտրութիւններուն: Նախապէս այս դասաժամերու ուսուցիչները կը ճշդուէին կրթութեան նախարարութեան կողմէ եւ իրենց պաշտօնավարման շրջանը սահմանուած էր հինգ տարիով: Նոր կարգադրութիւնով այդ տարեշրջանը երկարելու իրաւասութիւնն ալ կը թողուի տնօրէնութեան:

Այս արդիւնքին համար գոհունակութիւն յայտնող Կարօ Փայլանը, կը նշէ թէ այս գործընթացի տեւողութեան երեք նախարարներ փոխուած են: «Նախապէս լուրջ խոչընդոտներ ապրեցանք ցեղային գաղտնագիրի բերումով: Հիմա պարտադրութեան տակ կրօնափոխ եղած մեր ազգայիններու զաւակները եւս հեշտութեամբ պիտի կրնան յաճախել իրենց նախընտրած դպրոցները» կ՛ըսէ Կարօ Փայլան:

**«Ակօս»**

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
## ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԹՈՒՆՈՒԶԻ ՄԷՋ

Շուրջ շաբաթ մը առաջ Թունուզի ծովափնեայ պանդոկներէն մէկուն ծովափին հանգստացող Եւրոպացի զբօսաշրջիկներուն վրայ ահաբեկչական արարքով մը տասնեակներով մահացողներ եւ վիրաւորներ եղան: Զոհերուն մեծ մասը Անգլիայէն եկած էին կազդուրուելու համար: Այս առթիւ երկրէն ներս ահազանգային վիճակ ստեղծուեցաւ, մնացեալ զբօսաշրջիկներուն անվտանգութիւնն ապահովելու համար: Ներկայ դրութեամբ Թունուզի կառավարութիւնը ստիպողական վիճակ յայտարարեց բովանդակ երկրին տարածքին:

«Արաբական գարուն»ը որ ծագում առաւ Թունուզի մէջ 2011ին, այժմ տնտեսական նոր տագնապի մը առջեւ կը գտնուի: Արդարեւ միմիայն զբօսաշրջութեան էն երկրին վնասը հասած է 500 միլիոն տոլար:

Թէեւ կազդուրման կայանին վրայ յարձակող ահաբեկիչն սպաննուած է, սակայն իշխանութիւնները կը շարունակեն յետաքննութիւնները ձերբակալելով որոշ կասկածելիներ:

## ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՊԱՏՆԷՇԱՊԱՏԷ ԻՐ ՍԱՀՄԱՆԸ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՀԵՏ

Իսրայէլի կառավարութիւնը որոշեց պատնէշապատել Յորդանանի արեւելեան շրջանը եզերող իր սահմանը: Այս միջոցառումը կը բացատրուի որպէս Տահէշի հաւանական յարձակումներէն երկիրը պաշտպանելու անհրաժեշտութիւն մը:

Շար.ը էջ 19

# ՊԱՏՃԱՌ ԵՒ... ՀԵՏԵՒԱՆՔ (Բ.)

**ԷՏՈՒԱՐՏ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ**

Սոյն յօդուածին առաջին մասին մէջ նշած էինք, որ Երեւանի մէջ համաժողովրդական ցոյցերու վերածուած երիտասարդական ընդվզումները փոխադարձ համաձայնութեամբ, ուշ կամ կանուխ կ'աւարտին:

Այսպէս կամ այնպէս կը փոխհատուցուին նաեւ նիւթական կորուստները (փառք Աստուծոյ, որ մարդկային կորուստներ չեղան):

Սակայն, ապացուցման կարիք չունեցող անհերքելի ճշմարտութիւն մը կայ՝ հետեւանքներու վերացման ամենակարճ ուղին պատճառին անդրադառնալն է:

Ըստ մեզի, ամէնէն իշխանամէտ պաշտօնեան իսկ չի կասկածիր, որ մայրաքաղաքի ու հանրապետութեան երիտասարդութիւնը մէկ վայրկեանի մէջ ու իր քմահաճոյքի համար չէ, որ դուրս եկաւ փողոց՝ նկատի ունենալով նաեւ ոստիկանութեան հետ առճակատելու ոչ ցանկալի հեռանկարը:

Անշուշտ շատ դիւրին է ոստիկանութիւնը մեղադրել բռնի ուժ կիրառելու մէջ, թէեւ այդ մօտեցումը փակուղի տանող ամենակարճ տարբերակն է: Աշխարհի բոլոր երկիրներուն մէջ ալ ոստիկանութիւնը գէշ աղէկ իր գործը կ'ընէ եւ այս առումով մերինները բացառութիւն չեն եւ չե՛ն կրնար ըլլալ: Չեն կրնար միայն այն պատճառով, որ այդ կառոյցը վերադասի հրամաններուն անմնացորդ ենթարկուող կազմակերպութիւն է: Խնդիրը, ինչպէս կ'ըսեն, չափը անցնելու կամ չանցնելու մէջ է, բայց մեր յօդուածին նիւթը այդ չէ, այլ պատճառները... ա՛յն պատճառները, որոնք տասնեակ օրերով օդին մէջ կախուած, բայց համբերութեամբ լուծումներ կ'ակնկալէին:

Ահա այդ ակնկալուող պատասխաններուն բացակայութիւնն է, որ ժողովուրդը դուրս հանեց փողոց: Օրերով, ի պատասխան տասնեակ «ինչու»-ներու եւ «ինչպէս»-ներու անհոտաբաշխ ու անտրամաբանական պատասխաններ հնչեցին:

Մինչդեռ ընդամէնը յստակ բացատրութիւն պէտք էր տալ այն մասին, թէ ինչո՞ւ, օրինակ, ելեկտրական հոսանքին սակագինը տասնեօ'թը դրամով պիտի սղի, եւ ոչ, ըսենք, քսան կամ տասնհինգ դրամով: Սպառողին արդար պահանջն է ծանօթանալ պատասխանատու կառոյցներու՝ տուեալ պարագային ռուսական տնօրինութեան ենթակայ "«ՀԷՑ»-ի (Հայաստանի Ելեկտրական Ցանցեր) եւ հայաստանեան կողմի՝ «ՀԾԿՀ»-ի (Հանրային Ծառայութիւնները Կարգաւորող Յանձնաժողով) հիմնաւորումներուն:

Բացատրութիւնները, թէ սղաճը կատարուած է միշտ բարգաւաճող եւ աւելի քան ինքնաբաւ այդ կազմակերպութիւնը սնանկացումէ ազատելու համար՝ ոչ մէկ քննադատութեան կրնար դիմանալ:

Նախ, եթէ իրականութեան մէջ այդպէս է եւ ՀԷՑ իսկապէս դրամական լուրջ խնդիրներ ունի, ուրեմն ինչո՞ւ եւ ինչպէ՞ս է, որ ռուսական ընկերութեան գլխաւոր տնօրէնը վաթսուն հազար տոլարի հասնող աշխատավարձ կը ստանայ, իսկ ընկերութեան նոյնիսկ միջին օղակներու պաշտօնեաները տասնեակ հազար տոլար արժողութեամբ շքեղ ինքնաշարժերով կ'երթեւեկեն: Կամ, սնանկութեան եզրին հասած ընկերութիւնը ի՞նչ տրամաբանութեամբ երեք օրը անգամ մը իր բեռնատար մեքենաները նորոգել կու տայ նոյն վարպետին քով՝ կարճ միջոցի մը մէջ անոր վճարելով 57 միլիոն դրամ, որ կոպիտ հաշուարկով համազօր է 120-130 հազար ամերիկեան տոլարի:

...Եւ քանի որ այս հարցումներուն տնտեսական ու իրաւական ճշգրիտ պատասխաններ չտրուեցան՝ յառաջ եկաւ այն պարզ եզրակացութիւնը, թէ ամէն ինչ տեղի կ'ունենայ նաեւ հայաստանեան պաշտօնեաներու գիտութեամբ կամ լուռ համաձայնութեամբ, եւ երկու կողմերու միջեւ տեղի ունեցող առճակատումները իրականութիւնը հանրութեան ամենատես աչքէն քօղարկելու խաղ են միայն...:

Անպատասխան մնացող «ինչու»-ներուն շարանը նորանոր եզրահանգումներու տեղիք տուաւ, որոնք պատկան կառոյցներուն կողմէ ո'չ հաստատուեցան, ո'չ ալ հերքուեցան:

Ցոյցերէն առնուազն շաբաթ մը առաջ երեւանեան մամուլը կը գրէր. «Հանրային ծառայութիւնները կարգաւորող յանձնաժողովի նախագահ Ռոպէրթ Նազարեան եւ Հայաստանի Ելեկտրական Ցանցեր ընկերութեան տնօրէն Եւկէնի Պիպին կարծես քիչ մը «կռուած են»: Վերջինս խիստ նամակ մը ղրկած է Նազարեանին: Նամակին իմաստը այն է, որ եթէ յանկարծ ելեկտրական հոսանքը 17 դրամով չսղի, ինչպէս ինք կը պահանջէ, ուրեմն ան՝ Պիպին, կ'անջատէ բոլորին լոյսերը: Որովհետեւ, ըստ ՀԷՑ-ի տնօրէնի, յայտին մէջ ներկայացուած բոլոր թիւերը աւելի քան հիմնաւոր են: Նազարեան յանձնաժողովի երեկուան նիստին, որու ընթացքին որոշուեցաւ ելեկտրական հոսանքին սակը բարձրացնել շուրջ 7 դրամով, սադրանք անուանեց Պիպինի այդօրինակ մօտեցումը:

- "Christians of the Arab World are changing and challenging the religious and cultural discourse in Sweden" by Rev. Sune Fahlgren, Stockholm School of Theology
- "Contemporary Feminisms in Lebanon: Lights in the tunnel" by Dr. Pamela Chrabieh, American University in Dubai
- "The social media as a means of social and cultural integration for religious communities in the Eastern Mediterranean" by Dr. Evangelos Venetis, Hellenic Foundation for European and Foreign Policy in Athens
- "Apocalyptic view of history and the challenge of Christian presence in the Middle East" Dr. Nicolas Abou Mrad, Sorbonne University
- "Psychological profiles of the Arab people: Ingrained paradoxes" by Ms. Maya Khadra, Université Saint-Esprit de Kaslik in Lebanon
- "Theological responses for the rormation of required changes in the Middle East" by Dr. Sylvie Avakian, Near East School of Theology in Lebanon

**Dr. Jebejian's contribution**

This is how Dr. Jebejian, General Secretary of The Bible Society in the Gulf began his paper:

I am a Lebanese-Armenian who has lived with the dual identities and histories that have been examples of struggle and survival: the first one, Lebanese, with its local and regional conflicts, and the second one, Armenian, in its perseverance for a national identity and a solution to a just cause: the recognition of the first ethnic cleansing of the 20th century, the Armenian Genocide.

Continued on page 4

# Sixtieth anniversary of Haigazian University to be celebrated at Dorothy Chandler Pavilion



LOS ANGELES -- The Armenian community of Los Angeles is set to mark the 60th anniversary of Haigazian University with a string of extraordinary celebrations this fall.

The centerpiece of events will be a once-in-a-lifetime LA Opera double bill, which Haigazian supporters will have the opportunity to attend as a group. Starring world-renowned tenor Plácido Domingo and featuring two works by Puccini, *Gianni Schicchi* and *Pagliacci*, the performance will be held at the Dorothy Chandler Pavilion on the evening of Saturday, October 3, 2015. The performance will be preceded by a black-tie cocktail reception, followed by the Haigazian University 60th anniversary Gala Supper, with guests of honor including Plácido Domingo.

The anniversary events are being organized by the recently established Haigazian University 60th Gala Committee, co-chaired by philanthropists Harry Nadjarian and Tina Segel. An Honorary Committee has also been formed, with members including Governor George Deukmejian, Dr. Vartan Gregorian, Zubin Mehta, Ambassador Edward Djerejian, Baroness Caroline Cox and Mrs. Joyce Philibosian Stein, among others.

Proceeds from the anniversary events will benefit a major expansion of the Haigazian University Endowment Fund. "The purpose of the 60th-anniversary events is twofold," Harry Nadjarian said. "First, we'd like to introduce more of our community to Haigazian University and its magnificent tradition of academic excellence; and second, we seek to raise support for the expansion of the Haigazian University Endowment Fund, which will enable the university to widen the scope of its programs and become self-sustaining for the next 60 years and beyond."

Established in Beirut, Lebanon, in 1955, Haigazian University is the diaspora's only Armenian university. With a broad liberal-arts curriculum and a strong emphasis on diversity, it offers bachelor's and master's degrees as well as a teaching diploma. It is attended by Lebanese and Armenian students from 20 countries. Over the decades, graduates of the university have gone on to become accomplished Armenologists, entrepreneurs, teachers, scientists, academicians, and religious and community leaders.

Sona Hamalian, a Haigazian alumna who is a philanthropic advisor and fundraiser, joined the Haigazian University 60th Gala Committee in support of her alma mater. "When Mr. Harry Nadjarian asked me to join the committee, I agreed at once because his passion as an exemplary philanthropist eager to help our beloved university was unmistakable," she said. "What a great pleasure it is to work with our Gala Committee for the Haigazian cause!"

Hamalian, who earned a degree in Armenian Literature from Haigazian, has held posts with the Armenian Missionary Association of America and other leading Armenian organizations. She later helped found the academic programs of the American University of Armenia and worked with a number of international development organizations including the Eurasia Foundation and Catholic Relief Services. The founder and president of the fundraising and public-relations firm Creative Networks, she has also trained nonprofit organizations in Afghanistan.

As she reminisced about her studies at Haigazian University, Hamalian said, "Those four years were among the most wonderful, most genuinely rewarding times of my life. I also have the fondest memories of Dr. John Markarian, the university's founding president, who just turned 98! He is an outstanding, highly dedicated leader who capably steered the university during the most challenging years of the Lebanese Civil War."

The upcoming anniversary events will kick off under the stars in the beautiful Music Center Plaza with a private champagne reception. Guests will then be guided into the Dorothy Chandler Pavilion where Plácido Domingo will sing the title role of Gianni Schicchi in Woody Allen's hilarious staging of Puccini's comic masterwork. Following the intermission, Domingo will conduct Franco Zeffirelli's epic production of *Pagliacci*. The night's culminating event will be the Gala Supper, with guests of honor including Plácido Domingo and a distinguished roster of dignitaries and community leaders.

Ticket information to be published soon.

Haigazian University was founded in 1955 through the joint efforts of the Armenian Missionary Association of America and the Union of Armenian Evangelical Churches in the Near East.

# Kirk Kerkorian's Tracinda Corp. to Produce Film on Armenian Genocide

LOS ANGELES -- Tracinda Corp., the holding company founded by the late Kirk Kerkorian, has unveiled production company Survival Pictures with the Christian Bale-Oscar Isaac drama "The Promise" as its first project, Variety has learned exclusively.

Survival is described as telling stories of "perseverance, endurance and the inextinguishable fire of the human spirit" to reflect Kerkorian's values. Kerkorian, who bought and sold MGM and United Artists three times, died on June 16 at the age of 98.

"The Promise" will be produced and financed by Survival Pictures managers Eric Esrailian and Anthony Mandekic, with "Hotel Rwanda" director Terry George helming from a script he wrote with Robin Swicord.

The story is set during the last days of the Ottoman Empire, which was dissolved in 1922, with shooting in Portugal and the Canary Islands scheduled for the fall. Mike Medavoy ("Black Swan") is producing for his Phoenix Pictures banner with Esrailian, Ralph Winter ("X-Men") and William Horberg ("Milk").

The script centers on a love triangle with a medical student, an American journalist based in Paris and a beautiful and sophisticated woman. Bale will play the reporter, and Isaac will portray the student, who's conflicted by old-world traditions.



Bale was last seen in "Exodus: Gods and Kings" and stars in two completed Terrence Malick titles — "Knight of Cups" and "Weightless." Isaac will be seen in "Star Wars: The Force Awakens" and "X-Men: Apocalypse."

Longtime Kerkorian attorney and spokesperson Patricia Glaser said, "Survival Pictures was born out of Kirk Kerkorian's unwavering dedication to telling inspiring human stories for audiences around the world. 'The Priomise' will be a wonderful love story and will open the door to the championing of human rights. This film fulfills a longstanding dream for Mr. Kerkorian, who was thrilled to participate in the development and casting process."

# Conference on Shifting Identities

**Continued from page 3**

The two identities have one thing in common: the struggle to build a life in the midst of uncertainties, a life that goes much further than the personal dimension and embraces different aspects of the community at large.

Underlining his hybrid identities, Dr. Jebejian said,

I often find myself giving a history lesson to whoever asks me, "Where do you come from?" To put it simply, I usually say, "I am Armenian, but I was not born in Armenia. I was born in Lebanon. I have Lebanese nationality, but I am not an Arab. My father is a survivor of the Armenian Genocide who first sought refuge in Aleppo, Syria, and then settled in Lebanon."

Enumerating the different significant eras in the Armenian community's history in Lebanon from 1915 to the present – the centenary of the Armenian Genocide, Dr. Jebejian emphasized that for many such a history, punctuated with tragedies, threatens identity, certainty, and authority and thus impacts religious, economic, and social life.

Dr. Jebejian explained that the momentum and the process of change, including the shifting of identities, should not be a surprising phenomenon, especially if it is looked at from a Christian perspective. He quoted Mugambi and Guy who argue that theology requires human progress because Jesus started the change process with his disciples and went on changing each and every person He met. For him, the Christian Church is an integral part of this same human history and is equally responsible for changing history by changing the people they encounter, irrespective of their national, ethnic, and cultural identities.

Dr. Jebejian concluded his paper thus:

As fourth generation Armenians my children carry the pain of the Genocide and so does every Armenian. We carry the pain of our ancestors who were massacred and also the pain of being deprived of living in our homeland. The same pain has enriched my life, though. Also, it has helped me to understand the pain of the Other. This same pain made me realize that it is possible to live, prosper, and dream in the context of multiple identities.

Based on his personal experiences and "the present gloomy, uncertain" political scene in the Middle East, Dr. Jebejian said, "The challenge of the Church in general and in the Middle East in particular is to first understand the Other, the Other in its own context and to experience the dynamism of life within the path of each and every one of the Other."

# Armenian Electric Utility Fined

**Continued from page 1**

situation. "Is that right or wrong? That is certainly bad for consumers," he said.

Robert Nazarian, the PSRC chairman, rejected the explanation. "If you decide what is right and what is wrong, then why are you dealing with this commission in the first place?" said Nazarian. "You can give yourself orders and ignore Armenia's laws and regulations."

# ՀՆՉԱԿԵԱՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆ ՈՒ ԹՈՒՐՔ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆԻ ԳԻՐՔԸ




**ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿԵԱՆ**

*Այժմ՝ հարիւր տարի անց, դժուար է հաւատալ, երեւակայել անգամ, որ 1915 Թուականի Մեծ եղեռնը չէ՛ր լինելու, միլիոնաւոր մեր հայրենակիցները չէի՛ն նահատակուելու, Արեւմտահայաստանը չէ՛ր հայաթափուելու, եթէ 1913 Թուականի Սեպտեմբերի 7-ին, ռումինական Կոստանցա քաղաքում տեղի չունենար Հնչակեան կուսակցութեան պատգամաւորական ժողովը, որի պատուիրակները, կանխազգալով համազգային նախճիրի վերահաս վտանգը, որոշեցին բռնասպանութեամբ վերացնել նախճիրը յղացողներին եւ այն իրագործել ձգտողներին՝ Թալեաթին, Էնվերին, Ջեմալին: Այդ վճռականութեամբ համակուած՝ համագումարի պատգամաւորները Պոլիս վերադարձան, զէնք-զինամթերք հայթայթեցին, անգամ Կովկասից դիպուկահարներ հրաւիրեցին: Վերջին պահին, սակայն, երբ նուիրական նպատակի իրականացումը այնքան մօտ էր թւում, մատնուեցին:*

*Թուրքիայի ռազմական ատեանը քսան ամենակարկառուն հնչակեաններին մահուան դատապարտեց, 1915 Թուականի Յունիսի 15-ին Պոլսի Բայազիդ հրապարակում կախաղանահանեց... Թուրք ժողովրդավար ընկերվարական Քադիր Աքինը, որը Ստամպուլից Երեւան է ժամանել հնչակեան քսան յեղափոխականների նահատակութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջազգային գիտաժողովին մասնակցելու՝ զեկուցմամբ հանդէս գալու համար, ասում է. - Մանկութեանս տարիներին ես ֆուտպոլ եմ խաղացել Բայազիդ հրապարակում ու մտքովս էլ չեմ անցկացրել, որ այդ նոյն վայրում կախաղանի չուաններից ճօճուել են Փարամազն ու նրա 19 համախոհները:*

*Երբ հասակ առայ, աններելի ուշացումով հասու եղայ մե՛ր իսկ անցեալի իրադարձութիւններին, մեղաւորութեան զգացումով համակուեցի Քսանների՝ յատկապէս Փարամազի նկատմամբ, որը դեռեւս Օսմանեան կայսրութիւնում արմատաւորել, տարածել է ժողովրդավարական գաղափարախօսութիւնը, պայքարել ինչպէս հայ, այնպէս էլ Թուրք, քուրդ, յոյն, ասորի բռնաճնշուած ժողովուրդների ազատագրութեան համար:*

*Փարամազը, նոյն ինքը՝ Մաթեւոս Սարգսեանը, յեղափոխական գաղտնանուամբ ռուդոստոցի Համբարձում Գրիգորեանը, ծնուել էր 1863-ին, Գողթան գաւառի Մեղրի գիւղում, սովորել էր ծննդավայրի ծխականում, ուսանել Էջմիածնի Գէորգեան ճեմարանում: 1883-ին ըմբոստ նկրտումների համար արտաքսուել էր ճեմարանից, 1897-ին ասպատախումբ էր կազմաւորել, տասներեք մեծ ու փոքր ճակատամարտերով մտել էր Վան, ձերբակալուել, մահուան էր դատապարտուել, Վանի ռուսական փոխհիւպատոս Մաեւսկու միջնորդութեամբ փոխադրուել էր Կովկաս, որտեղ երեք տարուայ բանտարգելութիւնից յետոյ ազատ էր արձակուել ու կազմակերպել էր փոխարքայ Գոլիցինի մահափորձը: 1905-ին իր ասպատախմբով մասնակցել էր հայ-Թաթարական բախումներին, 1908-ին, Սահմանադրութեան հռչակումից յետոյ, վերադարձել էր Օսմանեան կայսրութիւն, քարոզարշաւ էր նախաձեռնել երկրի ղեկավարութիւնն ստանձնած «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան դէմ, հակակառավարական ելոյթներով հանդէս էր եկել Վանում, Ատաբազարում, Տիարբեքիրում, Հայնիում, Արղնի-Մատենում, Մալաթիայում, Խարբերդում, ամենուր երիտթուրքերին անուանել էր «հայերի դահիճներ», 1914-ի Յուլիսին, Թալեաթի, Էնվերի, Ջեմալի դէմ մահափորձ կազմակերպելու, անկախ, ինքնավար Հայաստան ստեղծելու նպատակով վերադարձել էր Պոլիս: Ձերբակալուել, նպատակները չէր հասցրել իրագործել:*

*Փարամազը նաեւ գրող, հրապարակագիր էր, հեղինակել էր «Պաքօ», «Քամու բերածը քամին կը տանէ», «Ձեռքերը վեր կամ ճուղուպրիստները» Թատերգութիւնները, «Իմ դատավարութիւնը Տաճկաստանում» պաշտպանաճառը, «Հայի պահանջը», «Բարենորոգումները Հայաստանում» խոհագրութիւնները: - Մենք՝ Թուրք մտաւորականներս անգամ, մեր ոչ վաղ անցեալի, յատկապէս հայերին առնչուող իրադարձութիւնները վատ գիտենք: Թուրքական Հանրապետութիւնը հիմնադրել էին յանցագործներ, որոնք սանձազերծել էին հայերի, յոյների, ասորիների, այլ ոչ իսլամ ժողովուրդների ցեղասպանութիւնը, այդ պատճառով էլ սերունդներից հետեւողականօրէն քօղարկում էին իրենց ոճիրները, աւելին՝ խռովարարութեան, դաւաճանութեան, անջատողականութեան մէջ մեղադրում էին իրենց զոհերին: Պատմական ճշմարտութիւնը բացայայտելու, իմ ժողովրդին իր իսկ անցեալի հետ առերեսուելու հնարաւորութիւն ընձեռելու համար ես, իմ համեստ կարողութեամբ, ձեռնամուխ եղայ Փարամազին նուիրուած գրքի հեղինակմանը, որը գրելիս, յատկապէս մեր երկրի կարծրատիպերը յաղթահարելու առումով, ահռելի ջանքեր ներդրեցի ու վերջնական նպատակս իրականացրի: «Հայ յեղափոխական Փարամազ» գիրքը լոյս տեսաւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի սգահանդէսի օրերին:*

*Քադիր Աքինը, միայն Փարամազի գաղափարախօսական ու մարտական գործունէութիւնը նկարագրելով, նրան, նրա մարտընկերներին «նաեւ մեր», այսինքն՝ Թուրք ժողովրդի հերոսներին ներկայացնելով չի գոհացել, անդրադարձել է Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականութեանը, որպէս անմիջական հակադարձութիւն Սասունի, Զէյթունի, Վանի ապստամբութիւններին, օսմանեան դրամատան բռնագրաւմանը, Ատանայի 1909-ի կոտորածին: Յատուկ ծաւալուն բաժիններ են նուիրուած Հնչակեան կուսակցութեան պատ-*



Քադիր Աքին

*մութեանն ու գաղափարաբանութեանը, 1915-ի Ցեղասպանութեանը: Հեղինակը, իր դրոյթները հիմնաւորելու համար, լայն տեղ է յատկացրել լուսանկարներին, վաւերագրերի պատճէններին, փաստական այլ բազմաբնոյթ նիւթերի: «Հայ յեղափոխական Փարամազ» գիրքն այս տարուայ Ապրիլին 1350 օրինակով լոյս է ընծայել Անքարայի հեղինակաւոր «Դիփնոթ» հրատարակչութիւնը: Տպաքանակը 20 օրում սպառուել է: Երկրորդ խմբաքանակը, դարձեալ 1350 օրինակ, սպառուել է մէկ ամսում: Շուտով հրատարակիչը երրորդ անգամ լոյս կ՚ընծայի գիրքը:*

*«Հայ յեղափոխական Փարամազը» գրքի մասին դրուատական գրախօսականներ են տպագրել Թուրքական «Թարաֆ», «Ռադիկալ», «Էվրասիա», «Բիրկիւն» օրաթերթերը, հեղինակի հետ հանդիպումներ են ունեցել Անքարայի, Ստամբուլի, Իզմիրի, Նիւրնբերգի, Բեռնի, Փարիզի առաջադէմ Թուրք ընթերցասէրները: Այնուամենայնիւ, նա իր ամենաբարձր գնահատականը համարում է Քոբանիում իսլամ ծայրայեղականների դէմ մարտնչող Սուփհի Նեժաթի՝ Փարամազ յեղափոխական անուամբ վերամկրտուելը: Ու չնայած մի քանի օր առաջ Սուփհին զոհուել է, իշխանութիւնները որոշել են Փարամազ վերանուանել Միշթենուր լեռնապարը, որտեղ նա իր վերջին մարտն է մղել: Քադիր Աքինի հետ զբօսնում ենք աղջամուղջում ընկղմուող Երեւանում, եւ նա նրբանկատօրէն չի հարցնում, թէ Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքում որտե՞ղ է գտնւում Փարամազի յուշարձանը, նրա անունը կրող փողոցը, դպրոցը, Թանգարանը: Փոխարէնը ես ուզում եմ իմանալ՝ ինչպէ՞ս է նա պատկերացնում հայ-Թուրք ժողովուրդների ապագան: Ժողովրդավար ընկերվարականը ոգեւորւում, համոզուած պնդում է, որ արդարութիւնն ի վերջոյ յաղթանակելու է, Թուրք, հայ, քուրդ ժողովուրդները այսօրուայ Թուրքիայի տարածքում իրենց անկախ պետականութիւններն են ստեղծելու, հաշտ ու համերաշխ համադաշնութիւնում են ապրելու: Թէ ինչպէ՞ս է կոչուելու այդ նոր պետութիւնը, Քադիրը չի ասում: Գուցէ չի ուզում:*



# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ ՈՐԲ ՉՊԻՏԻ ԼԻՆԵՆ




*ԼՈՒՍԻՆԷ ԹԵԽՈՍԵԱՆ*

*Ստամպուլի Թուզլա թաղամասի Քամփ Արմէն անունը կրող հայկական որբանոցը հայ ժողովրդին վերադարձնելու պահանջով Ստամպուլի հայերի «Նոր Զարթօնք» շարժումն արդէն 2 ամիս է, ինչ խոշոր բողոքի ակցիա է նախաձեռնել: Aparaj.am-ի թղթակիցը զրուցել է «Նոր Զարթօնք» շարժման խօսնակ, բողոքի ակցիայի կազմակերպիչ, Թուրքիացի հայ Սայեաթ Թէքիրի հետ:*

-Արդէն 60 օրից աւելի է, ինչ Քամփ Արմէն ճամբարի տարածքում բողոքի ակցիա էք իրականացնում: Կը պատմէ՞ք ակցիայի մասին:

*-Հայ բողոքական եկեղեցին գնել էր ճամբարը, բայց 1979թ. թուրքական կառավարութիւնը կալուածագիրը խլեց հայերից եւ 1983թ. ձրի տուեցին թուրքի: Այսօրուայ տէրը՝ 7-րդ տէրն է: Այս տարի փլման արտօնութիւն ստացան, եւ մենք գիտէինք, որ շէնքը պիտի փլուզեն: «Նոր Զարթօնք» շարժումը որոշեց, որ պէտք է հայերինը լինի այդ ճամբարը: Դժբախտաբար, գործը մեզնից առաջ ընկաւ, եւ ճամբարի 1/3-ը քանդեցին: Գնալով ճամբար եւ կազմակերպելով ցոյցեր՝ մենք արգելք եղանք շէնքի ամբողջութեամբ քանդմանը: Լրանում է արդէն դիմադրութեան 2-րդ ամիսը: Մենք դիմադրութիւնը կը շարունակենք եւ կը մնանք այնտեղ այնքան՝ մինչեւ կալուածագրով Քամփ Արմէն ճամբարը մեզ վերադարձնեն: Այն Թուրքիայում ապրող հայերիս յիշողութիւնն է:*

-«Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան պատգամաւոր Մարգար Եսայեանը խորհրդարանական ընտրութիւններից առաջ խոստացել էր, որ որբանոցի սեփականութիւնը կը վերադարձուի հայկական կողմին: Այսօր այդ գործընթացը ի՞նչփուլում է:

*-«Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան անդամ Մարգար Եսայեանը ընտրութիւններից առաջ խոստացել էր հետամուտ լինել ճամբարը հայերին վերադարձնելուն, բայց այդ խոստումը, պարզւում է, քուէ շահելու համար էր միայն: Ժողովուրդը, սակայն, հաւատաց այդ խոստումներին:*

*Մենք կազմակերպեցինք ցոյցեր Ստամպուլի կեդրոնում, մամլոյ ասուլիսներ, բրոշիւրներ պատրաստեցինք Քամփ Արմէնի մասին: Արդիւնքում՝ մամուլը եւ ժողովուրդը հետաքրքրուեց այս հարցով:*

-Թուրքեր եւ քրդեր մասնակցո՞ւմ են ցոյցին:

*-Անշուշտ: Մենք գիշեր ու ցերեկ մնում ենք ճամբարում: Մեզ միացան ե՛ւ թուրքեր, ե՛ւ քրդեր, մանաւանդ՝ Թուլզայի շրջանի ժողովուրդը: Ցոյցի առաջին օրերին մենք էլեկտրականութիւն չունէինք, եւ հարեւան Թուլզայի շրջանի էլեկտրակայարանի աշխատողների օգնութեամբ հոսանքի գիծ քաշեցինք դէպի ճամբար: Ճամբարի տարածքում կար նաեւ աւազան, որը նոյնպէս վերանորոգեցին թուրք աշխատողները:*

*Ճամբարը սկսեց գործել՝ որպէս ճամբար: Ճամբարին կից շաբաթուայ վերջին օրերին կազմակերպում ենք դասախօսութիւններ հայոց պատմութեան, գրականութեան մասին, սովորեցնում ենք այբուբենը, ֆիլմեր ենք ցուցադրում:*

- Պատահականութիւն չէ՛, որ ճամբարի ապամոնտաժումը համընկաւ 2015 թուականի հետ, երբ աւելի շատ են խօսում Ցեղասպանութեան հետեւանքների մասին:

*- Ճամբարի քանդումը կապ չունի Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի հետ: Թուքիայի պետութիւնը ցեղասպանութիւնը մերժում է, եւ, բնականաբար, այսպիսի իրադարձութիւն չէր ուզում: Թուրքիան ապուշ երկիր չէ. ճամբարի քանդումը սպիտակ ցեղասպանութիւն է: Այն ցեղասպանութեան շարունակութիւնն է, ուղղակի ճամբարի տէրն է որոշել հողատարածքը տուն շինելու համար օգտագործել: Բայց լաւ է, որ 2015-ին եղաւ այս ամէնը, որովհետեւ այսպէս մենք մեր ձայնը աւելի շատ կարողացանք տարածել:*

-Ձեր կարծիքով ճամբարի քանդումը հայերին էթնոկրոնական զտման ենթարկելու միջո՞ց է:

*-70-ականներին կալուածագիրը մեր ձեռքից վերցրեցին եւ մեր ինքնութիւնն էլ հետը: Մենք ճամբարի կարիքը ունենք:*

-Թուրքիայի իշխանութիւնները սպառնալիք չե՞ն կիրառում:

*-Մենք մեր անվտանգութիւնը պահում ենք, միշտ զգօն ենք: Բայց մեզ ճնշել չեն կարող, որովհետեւ Թուրքիայի համար դա կը լինի խայտառակութիւն:*

-Ի՞նչ էք կարծում՝ պետութիւնը ճամբարը կը վերադարձնի հայերին:

*- Ես պետութեանը վստահող մարդ չեմ, որովհետեւ՝ եթէ ուզէին, ապա վաղուց լուծած կը լինէին այս հարցը: Բայց, յուսամ, ամէն ինչ լաւ կը լինի:*

-Դուք յայտարարութեամբ էք հանդէս եկել եւ կոչ արել հայութեանը՝ միանալ ձեզ: Ի՞նչ ակնկալիքներ ունէք:

*- Թուլզայի այդ շրջանում գտնւում են մեծահարուստների առանձնատներ, եւ այդ տարածքում ճամբարի գտնուելը խանգարում է: Քամփ Արմէն ճամբարի քանդումը կապուած է դրամի հետ, բայց մենք այս հողամասը գնել ենք 1963թ. եւ ոչ մի դէպքում գումար չենք վճարելու: Մեր ձեռքից ճամբարը խլողները պէտք է գնեն տիրոջից եւ վերադարձնեն մեզ:*

*Կոչ արեցինք նրա համար, որ ասենք՝ այո՛, մենք հիմա որբանոցը պաշտպանում ենք, բայց մենք որբ ենք «Այդպես չպիտի լինի: Թուրքիայի հայերը որբ չպիտի լինեն»:*

*Մենք ցանկութիւն ունենք, որ հայ երիտասարդները գան Քամփ Արմէն ճամբար, եւ միաւորենք մեր ուժերը:*

-Հետաքրքիր է՝ ի՞նչ վիճակում է այսօր գտնւում Թուրքիայի հայ համայնքը:

*- Թուրքիայի հայ համայնքը կազմում է 40,000 մարդ: Կան, անշուշտ, նաեւ գաղտնի ապրող հայեր, իսլամացած հայեր, որոնց թիւը չգիտենք: Թուրքիայում հայերից շատերը ձուլուեցին: 40,000-ն էլ իր ինքնութիւնով, իր կրօնով, հաւատքով մնաց հայ: Ամենավատն այն է, որ լեզուն է ձուլւում, արեւմտահայերէնը վերանում է: Այսօր Թուրքիայում ապրող հայերը նման են «թուրքացած քրիստոնեաների»:*

*Ունենք 12 հայկական դպրոցներ եւ մէկ հայկական համալսարան, բայց դիպլոմը օրինական չէ. նունիսկ Թուրքիայում չի անցնում այդ դիպլոմը:*

*Հայկական դպրոցներում սովորում է 3000 հայ աշակերտ, բայց հայերից շատերը սովորում են պետական դպրոցներում կամ Ամերիկեան, Ֆրանսիական համալսարաններում:*

-Աշխատանքի տեղաւորուելու հարցում խնդիրներ լինո՞ւմ են:

*-Տեղեր կան, որ՝ այո, հայերին չեն վերցնում աշխատանքի: Բայց կան նաեւ ընկերութիւններ եւ կազմակերպութիւններ, որոնք չեն կարեւորում ազգութիւնը: Նրանք կարեւորում են աշխատանքի որակը: Բայց հայերին պետական համակարգում, յատկապէս ոստիկանութիւնում չես կարող տեսնել: Թուրքիայի օրէնքներում խտրականութիւն չկա, բայց մարդիկ ենթագիտակցաբար խտրականութիւն են դնում:*

- Ինչպէ՞ս են այսօր թուրքերը վերաբերում հայերին:

*- Հայոց ցեղասպանութիւնը մեծ ոճրագործութիւն էր, բայց ցեղասպանութիւնը շարունակւում է նաեւ այսօր: Այստեղ փոքր ազգերի նկատմամբ դեռ շարունակւում են ոճրագործութիւնները եւ մեր մէջ վախ են առաջացնում, նորից յիշեցնում մեր ազգին պատճառած տառապանքները: Ցաւալին այն է, որ այս վախի մթնոլորտը փոխանցւում է սերնդէ սերունդ: Սակայն նոր սերունդը վախկոտ չէ. պահանջում է իր իրաւունքները: Բայց այդ վախը եւ ճնշողական մթնոլորտը նպաստում է նաեւ ինքնութեան պահպանմանը եւ առաջացնում է նաեւ հակաճնշում:*

*Հասարակութեան մէջ լուրջ խնդիրներ չկան, բայց կան ազգայնամոլ, ֆաշիստ խմբեր, որոնք թիրախ են ընտրում հայերին: Օրինակ՝ Հրանտ Տինքի սպանութիւնը, որը Թուրքիայի մէջ շատ մեծ ալիք է բարձրացրել: Դատապարտուել է միայն մէկ հոգի, բայց ոճրագործութիւնը կազմակերպող խումբն ազատ է: Կամ՝ 2011թ. Ապրիլի 24-ի դէպքը, երբ ծառայողական զօրամասում սպանել են հայազգի զինուոր Սեւակ Շահին Բալըքչըին, եւ ոճրագործը նոյնպէս դատապարտուած չէ: Թուրքիան առանց պատերազմի հող չի տալու հայերիս: Մենք էլ, ռեալիստ լինելով, պէտք է հասկանանք, որ Թուրքիայի համար անգամ ցեղասպանութիւնն ընդունելը շատ մեծ հարց է, եւ ես այս հարցի առումով լաւատեսօրէն չեմ տրամադրուած: Այստեղ հարցը միայն հողերի հատուցման հարցը չէ: Հարցը ինքնութեան հարցն է: Թուրքիայի Հանրապետութիւնը կա-*

*Շար.ը էջ 19*



# ՀԱՅՐԵՆԻՔԸ ՈՐՈ՞Ւ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ

ՅՈՎԷԼ ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

Անցեալ Դեկտեմբերին, Տուպայի մէջ հանդիպեցայ զարմիկիս՝ Մարտիկին, որ վերջերս Հալէպէն հոն փոխադրուած էր, իր գործարանով, մեքենաներով, եւ 25 ոսկերիչներու պաշտօնակազմով, բոլորը իրենց ընտանիքներուն հետ մէկտեղ: Ընթրիքի ընթացքին, ան ըսաւ. «Սիրտս կ'այրի. Շատ պիտի նախընտրէի փոխանակ Տուպայի՝ Հայաստան հաստատուիլ... Ես հոն տուն ունիմ, իմ սի'րտս հոն է... Հոս, մեր պզտիկները Հայերէն կարդալ եւ գրել պիտի չսորվին... եւ Աստուած գիտէ որու հետ պիտի ամուսնանան...»

Մարտիկը յուզուած էր. Ան քանի մը անգամ Հայաստան գացած էր, հոն շինարարական գործի սկսած եւ վերջերս, Երեւանի մէջ ամբողջացուցած բնակարանային շէնք մը: Ան նպատակ ունէր հոն տեղափոխել իր գործը. Կրկին գացած էր քննարկելու իր նպատակը ընկերներու հետ, որոնք արդէն հոն գործատեղիներ ունէին, ու կը դիմագրաւէին ընդհանրացած դիւանակալական դժուարութիւններ (read Rapapaort article) եւ մաքսային գործողութիւններու դանդաղութիւն - ներածման եւ արտածման գործողութիւններու ընթացքին ապրանքներու ուշացում, շաբաթներով. ան յուսահատ վերադարձած էր: Երբ հարցուցի ինչու՞, ան բացատրեց ըսելով. «Գոհարեղէնի արտադրութեան համար ես օրական 2 ք. ոսկի կը գործածեմ. Ոսկին, որ հոս կը գնեմ առաջին օրը, կը յանձնեմ եւ կը վաճառուի յաջորդ օրն իսկ. :

Երանի ոսկերչական ցուցահանդէս՝ 2014-Մերիտիէն կեդրոն Հայաստանի մէջ արտադրելու պարագային, պէտք պիտի ըլլար յատկացնել աւելի քան 50 ք. ոսկի, ի զուր, դանդաղ մաքսային գործողութիւններու պատճառաւ». Այս մէկը ընելու միջոցը չ'ունէր. հրաժարեցաւ Համակարգին դէմ պայքարիլը դիւրին չէ. Նոյնիսկ մեր Հայ ոսկերիչներու միութիւնը, որ նախագահութեան բուռն աջակցութիւնը կը վայելէ, իր կարգին դիմագրաւեց այդ նոյն պիւրոքրադական դժուարութիւնները, անցեալ տարուայ Երեւանի մէջ տեղի ունեցած ցուցահանդէսին ընթացքին:

* * * * * * * * * *

Անցեալ շաբաթ տեղեկացայ որ ընկերոջս Յակոբին գործատեղին, Հայաստանի մէջ, որ ժամանակին 100 ոսկերիչի մարդուժ ունէր, գրեթէ դադրեցուցած էր իր արտադրութիւնը. Տարիներու ընթացքին հպարտ եղած եմ Յակոբին նուրբ ոսկերչական գործերով, պատրաստուած հմուտ Հայ ոսկերիչներու ձեռքով, հպարտ՝ իր հռչակաւոր ապրանքանիշով, ցուցադրուած Հոնկ-Քոնկի, Սինկափուրի, Տուպայի, Փարիզի եւ Մանհաթընի 5-րդ Պողոտայի լաւագոյն ցուցափեղկերուն ետին. Արդեօք ի՞նչ պիտի պատահի իր աշխատաւորներուն: Հաւանաբար Յակոբ պիտի տեղափոխէ իր հմուտ վարպետ ոսկերիչները դէպի իր արտասահմանի գործատեղիները, իսկ մնացածները՞...:

* * * * * * * * * *

Մի քանի ամիս առաջ, Փարիզի մէջ հանդիպեցայ տիկնոջ մը՝ իր 6 էն 10 տարեկան երեք զաւակներով, բոլորն ալ պատշաճ հագուածքով եւ քաղաքավար վարմունքով: Անոնք, օր մը առաջ հասած էին Երեւանէն եւ կ'ուղղուէին քաղաք մը Հայաստան՝ տիկինը լսած էր թէ աւելի դիւրութեամբ կրնային գաղթի թուղթեր ստանալ՝ գաւառային շրջաններու մէջ. անոնք այդ օրուան նախորդ գիշերը անցուցած էին Փարիզի "Gare de Lyon" գնացքի կայարանի սպասման սրահին մէջ, եւ որեւէ գաղափար չունէին թէ ուր պիտի անցնէին եկող գիշերները: Ֆրանսայի մէջ ոեւէ ծանօթ չունէին: Ես փորձեցի բացատրել թէ կեանքը դիւրին չէր այստեղ, եւ թերեւս աւելի լաւ պիտի ըլլար որ Հայաստան վերադառնային: Տիկնոջ համար, իրենք իրենց երազած տեղը հասած էին... իրենց Էլտորատոն: «Էլ հարց չկար»: Ամէն պարագայի, անոնք ծախած էին իրենց տունը, գնելու համար իրենց վիզաները, հատը 5000 տոլարի:

Կը մտածեմ Մարտիկին մասին, իր աշխատաւորներուն եւ անոնց ընտանիքներուն մասին, զրկուած Հայրենիքէն, անոր հողէն, աւիւնէն որ ան կ'ընծայէ պահպանելու եւ փոխանցելու մեր մշակութային ժառանգութիւնը, ժառանգութիւն մը որ նոյնքան թանկ է «մեզի» համար, քան նիւթական ժառանգութիւն մը, որ ամէն գնով կը ջանանք փոխանցել մեր զաւակներուն:

Կը մտածեմ Յակոբին գործաւորներուն մասին, որոնցմէ մի քանիներ իրենք զիրենք պիտի գտնեն Պրիւքսէլի, Փարիզի եւ Լոս Անճելոսի փողոցներուն մէջ. Ճիշդ այդ կնկան պէս, որուն հանդիպեցայ Փարիզի մէջ. Ժամանակի ընթացքին անոնք յաջողութիւն պիտի գտնեն եւ ի վերջոյ ձուլուին՝ իրենց որդեգրած նոր «հայրենիքներուն» մէջ:

Միւս կողմէ, կը մտածեմ նաեւ մեր Սփիւռքի Հայ գործարարներու մասին, որոնք կ'աշխատցնեն տասնեակ հազարաւոր գործաւորներ՝ Չինաստանի, Վիէթնամի եւ Թայլանտի մէջ, եւ որոնք վարպետ գործաւորներու կարիքը ունին: Ասիոյ ընթացիկ սղաճի կացութեամբ, աշխատավարձքերը ներկայիս աւելի աժան են Հայաստանի մէջ, ուր մարդիկ աւելի ուսեալ եւ վստահաբար աւելի հմուտ են: Ի՞նչն է որ արգելք կը հանդիսանայ սփիւռքի գործարարներուն որ տեղափոխեն իրենց գործը դէպի Հայաստան:

Ո՞ւր սխալած ենք

Որոշ արհեստներ կապուած են յատուկ ազգերու. Արհեստներէն մէկը, որու մէջ Հայեր կը գերազանցեն՝ ոսկերչութիւնն է: Ինչպէս Պարսիկները նշանաւոր են գորգ հիւսելու մէջ, Հայերը ճանչցուած են որպէս վարպետ՝ ոսկիի եւ արժէքաւոր մետաղներու գործին մէջ: Պատմութեան ընթացքին, ըլլայ Օսմանեան կամ Ռուսական կայսրութիւններուն մէջ, Սուլթանները եւ Ցարերը միշտ դիմած են Հայ ոսկերիչներու:

Սովետական միութեան ժամանակ Հայերուն այս ձիրքը ճանչցուած էր, ուրեմն ոսկերչութեան եւ ադամանդ տաշելու ճարտարուեստը գլխաւորապէս կեդրոնացած էր Հայաստանի մէջ:

Այժմ, մօտաւորապէս 15,000 հոգի կ'աշխատի ոսկերչութեան ճիւղին մէջ. սակայն քանակը այնքան կարեւոր չէ որքան որակը: Հայ ոսկերիչը յստակաբար ճանչցուած է միջազգային շուկային մէջ որպէս հմուտ վարպետ:

Ո՞ւր է որ սխալած ենք:

Կը մտածեմ Սփիւռքի մարդուժին մասին, արկախ վերոյիշեալ գործատէրերէն, եւ արկախ բարերարներէն, որոնք նիւթական նպաստ կը բերեն հայրենիքին:

Ֆրանսայի մէջ միայն, ունեցեր ենք հայ նախարարներ՝ տնտեսութեան, արդիւնաբերութեան, ունեցեր ենք հայ վարչապետ...

Ֆրանսայի պէս երկրի մը մէջ, ճանցուած որպէս օրէնքի պետութիւն, եւ օժտուած ազատ շուկայի տնտեսութեամբ:

Թուրքիոյ մէջ, վերջերս ունեցեր ենք հայ մը, որ եղած է Թրքական հանրապետութեան վարչապետի գլխաւոր խորհրդականը:

Թուրքիա, հպարտ անդամ մը աշխարհի 20 հզօրագոյն տնտեսութիւններու «ակումբ»ին:

Ես կը մտածեմ քաղաքական գործիչներու « տնտեսագէտներու մասին, Ֆրանսա, Թուրքիա եւ այլուր, որոնք հայ են ոչ միայն ծագումով, այլ սրտով « հոգւով, որոնք վստահաբար պիտի կատարեն իրենց ներդրումը, եթէ կոչ ըլլայ իրենց:

Մենք Սփիւռքահայերս, որ զրկուած ենք հայրենիքէն, որ հայրենիքի կարօտը կը քաշենք, ինչպէս շնչահեղձ մը կը կարօտի օդի, կը յուզուինք այն վայրկեանին որ ոտք կը դնենք Հայաստանի հողին վրայ. Եւ ալ աւելի կ'զգացուինք, երբ սփիւռքի նախարարին, կամ վարչապետին հիւրը կ'ըլլանք, եւ կամ երբ կը ճանչցուինք որպէս մասնակից Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովներուն:

Պէտք չէ՞ որ մենք, փոխանակ նախարարներու երկար եւ զգացական ճառերը մտիկ ընելու, գործի լծուինք: Պէտք չէ՞ որ մարդասիրական նպաստ բերելէ անդին, օգնենք մեր գիտուժով, եւ մեր այդ փորձառութիւնը, որ կը տարբերի խորհրդային վարչակարգի ժառանգուած փորձառութենէն, հայրենիքին ի նպաստ ծառայեցնենք:

Պէտք չէ՞ ստանձնենք մեր պատասխանատուութիւնները ի դէմ մեր ազգին, մեր Հայրենիքին: Պէտք չէ՞ որ սփիւռքը հաւաքէ իր գործարարները, տնտեսագէտները եւ քաղաքական գիտնականները, խնդրէ անոնցմէ որ պատրաստ են ծրագիր, յանձնարարականներ տալով Հայաստանի տնտեսութիւնը բարեփոխելու կարելի ձեւերու մասին: Նպատակ ունենալով բարելաւելու Հայաստանի դիրքը միջազգային դրամատան «երկիրներու գործի դիւրութեան» կարգին մէջ ( World Bank's rating of countries for their "ease of doing business"). Ասիկա՝ անշուշտ առանց որեւէ նպատակ ունենալու իշխանութեան միջամուխ ըլլալու:

Արդեօք սփիւռքը բաւական հասու՞ն է նման գործ ստանցնելու:

Արդեօք սփիւռքի օգնաւէին մէջ օգաչու կա՞յ:

Վերջին տասը տարիներուն ընթացքին,կ'ըսուի թէ մէկ ու կէս միլիոն Հայեր արտագաղթած են Հայաստանէն, դառնալով ենթակայ ճերմակ ջարդին: Այս մէկ ու կէս միլիոնին համար, ոչ մէկ օտար պետութիւն կրնանք մեղադրել:

Բա՛ւ է արտասուել:

Բա՛ւ է խօսակցութիւններ եւ յօդուածներ՝ սփիւռքի օրաթերթերուն մէջ, այս կամ այն Հայաստանի հանրապետութեան քաղաքական գործիչին սխալ ընթացքին մասին:

Բա՛ւ է բացասական քննադատութիւններ:

Թող Սփիւռքի առաջնորդները, որոնք իրենք զիրենք կը յարգեն որպէս առաջնորդներ, ոտքի ելլեն, մէկդի դնեն իրենց անձնական հարցերը, հաւաքուին, միասնութեամբ զօրանան, եւ պատասխանատուութիւն ստանձնեն, տէր կանգնելով հայրենիքին: Ի վերջոյ, որու՞ կը պատկանի Հայրենիքը:

Պատմութիւնը պիտի դատէ մեզ եւ մեր առաջնորդները՝ մեր անշարժութեան համար:

## ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԸՆՏՐԵՑ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ



Լոս Անճելըսի Իրանահայ միութիւնը Ապրիլին կայացած ընդհանուր ժողովին ընթացքին ընտրած է 2015-2017ի Կեդրոնական վարչութիւնը, նախորդ Կեդրոնական վարչութեան գործունէութիւնը հանգամանօրէն քննելէ եւ համապատասխան գնահատական տալէ ետք:

2015-2017 Նստաշրջանին համար ընտրուած Կեդրոնական վարչութիւնը իր առաջին նիստին ընթացքին կատարած է պաշտօններու բաժանում, հետեւեալ կարգով.

Յովիկ Գաբիգեան՝ ատենապետ
Փիթըր Տարաքճեան՝ փոխատենապետ
Կարէն Զարգարեան՝ գանձապահ
Հելէնա Իսադուլեան՝ քարտուղար
Վարդան Վարդանի՝ խորհրդատու
Արմինէ Ասլանեան՝ խորհրդատու
Ժիրայր Ղարախանեան՝ խորհրդատու:

## ԼՈՆՏՈՆ

# «ԱՊՐՈՂ ՅՈՒՇԵՐ»

### Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին Նուիրուած Մշակութային եւ Գեղարուեստական Ձեռնարկ






**ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒԶԷԼԵԱՆ**

*Հ.Բ.Ը.Մ.ի Լոնտոնի Մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ, Ուրբաթ 26 Յունիս 2015-ին, նախկին Չելսի Քաղաքապետարանի Սրահին մէջ (Old Chelsea Town Hall) տեղի ունեցաւ «Ապրող Յուշ» մշակութային եւ գեղարուեստական ձեռնարկը նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին, ինչպէս նաեւ՝ մահուան դէմ հայ ժողովուրդի տարած յաղթանակին:*

*Երեկոյթի երեք ժամ տեւող առաջին բաժինը, մինչեւ ժամը եօթ՝ նուիրուած էր տաղանդաւոր նկարիչ Նայիրի Աֆրիկեանի "Յիշողութիւնը դեռ կենդանի է" տպաւորիչ ցուցահանդէսին: հանդիսականները մեծ հետաքրքրութեամբ եւ հիացումով դիտեցին Նայիրիի նկարները, ինչպէս նաեւ նկարչութեան եւ քանդակագործութեան միաձուլումէն ծնած եւ արուեստագէտին ինքնատիպ ոճով զգեստաւորուած՝ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած գեղեցիկ ստեղծագործութիւնները:*

*Երեկոյթին բացումը կատարեց Ասատուր Կիւզելեան, որ յանուն Հ.Բ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղին ողջունեց պատուոյ հիւրերն ու հանդիսականները: Երեկոյթին ներկայ գտնուեցան կարգ մը պետական եւ հանրային դէմքեր, ինչպէս Պարոնուհի Քարոլայն Քոքս, Չելսիի նախկին քաղաքապետ՝ Քոնտոն Սիմընզ, Ալտըրմէն Մուշտաք Լաշարի, ՀՀ Դեսպանութեան խորհրդական Տիգրան Գալստեան եւ ուրիշներ: Կիւզելեան հակիրճ կերպով անդրադառնալէ ետք Հայոց Ցեղասպանութեան, մէջբերեց Ուինստոն Չըրչիլի (Winston Churchill) "The Aftermath" գիրքէն հետեւեալ հատուածը, որ կը վերաբերի Հայոց Ցեղասպանութեան. «...Կասկած չկայ որ այս ոճիրը ծրագրուած ու գործադրուած էր քաղաքական նպատակներով: Առիթը ներկայացած էր քրիստոնեայ ազգ մը մաքրագործելու Թրքական հողէն»: Ա. Կիւզելեան ապա կարդաց այն նամակը, որ ստացած էր Բրիտանիոյ Արտգործ Նախարարութենէն, ի պատասխան ընթացիկ տարուան Փետրուար ամսուն իր վարչապետ Քամերոնին, Նախագահ Օպամային եւ Նախագահ Նաթանյահուին գրած բաց նամակին: Արտգործ նախարարութեան նամակը կը հաստատէր որ Անգլիան չէր փոխած Հայոց Ցեղասպանութեան ճանաչման նկատմամբ իր որդեգրած դիրքը...: «Անգլիոյ եւ Ամերիկայի նման հզօր պետութիւններ կրնան թաղել արդարութիւնը, բայց անոնք պէտք է լաւ հասկնան որ ճշմարտութիւնը պատմութեան մէջ երբեք գերեզման չէ ունեցած'», ըսաւ Կիւզելեան:*

*Կոմիտաս Հաստատութեան հիմնադիր տնօրէն, Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանի եւ արդի հայոց պատմութեան մասնագէտ, երիտասարդ պատմաբան Արա Սարաֆեան «Յիշենք այսօր Թուրքիոյ մէջ ապրող հայերը» նիւթին շուրջ տուաւ տպաւորիչ դասախօսութիւն մը, հանգամանօրէն անդրադառնալով Թուրք եւ քիւրտ մտաւորականութեան, հասարակական եւ քաղաքական գործիչներու, ինչպէս նաեւ պարզ քաղաքացիներու եւ գիւղացիներու հետ ունեցած իր հանդիպումներուն Թուրքիոյ տարբեր շրջաններուն մէջ, որոնց քարտէզն ու լուսանկարները ցուցադրեց պաստառի վրայ իր ելոյթին զուգահեռ: Իր շահեկան դասախօսութեան մէջ Սարաֆեան ունկնդիրներուն ուշադրութիւնը հրաւիրեց այն իրողութեան վրայ, որ բաղդատած երկու տասնամեակ առաջ Թուրքիոյ մէջ տիրող հակաժողովրդավարական իրավիճակին, այսօր կացութիւնը զգալապէս բարեփոխուած է: Թուրքիոյ մէջ այժմ ազատ կերպով կը քննարկուին երբեմնի արգիլուած բազմաթիւ խնդիրներ, որոնց կարգին նաեւ հայոց ցեղասպանութիւնը, որուն հետեւանքով բազմաթիւ իսլամացած հայեր կը վերադառնան իրենց արմատներուն: Հայկական հարցի հետապնդման եւ անոր խաղաղ լուծման հաշուոյն տարուող աշխատանքին մէջ անհրաժեշտ է ապահովել Թուրք եւ քիւրտ մտաւորականութեան եւ հասարակական կազմակերպութիւններու համագործակցութիւնը, ընդգծեց Սարաֆեան:*

*Իր նիւթին խորապէս տիրապետած պատմաբանին ելոյթը մեծ տպաւորութիւն ձգեց ունկնդիրներուն վրայ:*

*«Հայաստանի ոգին եւ կործանման մոխիրներէն ծնած գեղեցկութիւնը» բնաբանով ելոյթ ունեցաւ Հայաստանի, Արցախի եւ հայ ժողովուրդի մեծագոյն բարեկամներէն Պարոնուհի Քարոլայն Քոքս, որ անդրադառնալէ ետք Ծիծեռնակաբերդի մէջ կայացած Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչման նուիրուած յուշահանդէսին այս տարուան Ապրիլ 24ին, խօսեցաւ ազերպէյճանական վայրագութիւններու մասին, որոնք գործադրուեցան Արցախի հայութեան դէմ պատերազմի տարիներուն: Պարոնուհին դատապարտեց Ազերպէյճանի կողմէ գործուած ոճիրները, որոնց հակադրեց արցախահայութեան ցուցաբերած քրիստոնէական ոգին եւ դրսեւորած հայրենասիրութիւնը: Ան Հայաստան եւ Արցախ կատարած իր բարեսիրական 82 այցելութիւններուն հետ առնչուած բազմաթիւ յուզիչ դրուագներ պատմեց, պաստառի վրայ ցուցադրելով իր ըսածները հաստատող լուսանկարներ: Ըստ Պարոնուհի Քոքսին՝ Արցախեան Պատերազմի ընթացքին Ազերպէյճան ամէն օր 400 (grad) կրատ հրթիռ կ'արձակէր Ստեփանակերտի վրայ...: Բանախօսուհին աստուածային միջամտութեան վերագրեց այն իրողութիւնը, ըստ որում Գանձասարի եկեղեցիին վրայ արձակուած հարիւրաւոր հրթիռներէն եւ ռումբերէն միայն մէկ հատը ինկած էր տաճարին շրջափակը, բայց չէր պայթած...: Պարոնուհիին սրտի խորքէն աղբիւրող խօսքերը ներկաները «լալու չափ» յուզեցին...: Ան իր ելոյթն աւարտեց կարդալով տաս տարեկան արցախահայ Գեղամին գրած բանաստեղծութեան անգլերէն թարգմանութիւնը, որուն մէջ խտացած էր Արցախի հանդէպ տղեկին ունեցած անսահման սէրը:*

*Կէս ժամ տեւող դադարէ մը յետոյ, որուն ընթացքին տեղի ունեցաւ ընդունելութիւն, գործադրուեցաւ ձեռնարկին գեղարուեստական յայտագիրը, մասնակցութեամբ հոյլ մը տաղանդաւոր հայ արուեստագէտ-արուեստագիտուհիներու:*

*«Տլէ Եաման»ի երաժշտութեան ընկերակցութեամբ՝ Մարալ եւ Թամար Պաղճեան գեղանի քոյրերը սկսան երեկոյթի գեղարուեստական բաժինը, բոցկլտացող մոմերով կատարելով լոյսն ու կեանքը խորհրդանշող ծիսական պար մը : Տպաւորիչ էր նաեւ «Հայուհիներ» պարը, զոր աւելի ուշ կատարեցին Մարալն ու Թամարը հայկական գեղեցիկ տարազներ հագած, մեր պարարուեստի ոճին ու ոգիին հաւատարիմ հեզաճկուն սահանքներով եւ շնորհալի շարժուձեւերով, Խաչատուր Աւետիսեանի երաժշտութեան ընկերակցութեամբ:*

*Երեւանի Սունդուկեան Թատրոնի վաստակաւոր դերասանուհի Ժենիա Ներսիսեան ապրումով արտասանեց Պարոյր Սեւակի «Ղօղանջ Եղեռնական» եւ Ս. Կապուտիկեանի «Քելէ Լաօ» բանաստեղծութիւնները:*

*Իր կատարած ստեղծագործութեան խորքը թափանցելու ունակութեամբ օժտուած՝ տաղանդաւոր դաշնակահար-երգահան Արթիւր Պոպիկեան վարպետութեամբ մեկնաբանեց Ա. Պապաճանեանի «Էլեկիա'»-ն եւ Երանեանի «Կիլիկիա»-ն: Պոպիկեան ներկաներուն հրամցուց նաեւ իր ստեղծագործութիւններէն "Երուսաղէմ"ը, զոր հեղինակին ընկերակցութեամբ կատարեց շնորհալի մեցոսոփրանօ Անայիս Հեղոյեան ջերմ ու գունագեղ երաժշտականութեամբ եւ անթերի վարպետութեամբ: Անայիս Հեղոյեան իրեն յատուկ վարակիչ հաղորդականութեամբ եւ կատարողական վարպետութեամբ երգեց նաեւ Բ. Կանաչեանի «Օրօր»-ը, դաշնամուրի ընկերակցութեամբ Քրիսթինա Առաքելեանի: Անայիսը իր երաժշտական տաղանդին զուգահեռ ՝ ունի պարզ, ջերմ ու հաղորդական բնաւորութիւն , որուն հետեւանքով դարձած է համայնքի սիրուած ու փնտռուած անձնաւորութիւններէն մէկը:*

*Թերեզա Գէորգեան օժտուած է հարուստ, յղկուած ու որակաւոր սոփրանօ ձայնով, որուն համոզուեցան ունկնդիրը, երբ երգչուհին կատարեց Կոմիտասի «Գարուն ա»ն եւ «Ծիրանի Ծառ»ը: Թերեզան եւ Անայիսը կատարեցին նաեւ զուգերգ մը, «Ծաղիկ»ը (խօսք Գ. Էմինի), դաշնամուրի ընկերակցութեամբ երգի հեղինակ՝ Քրիսթինա Առաքելեանի :*

*Սեդա Ուայթ խոր հասկացողութեամբ ու անթերի առոգանութեամբ ասմունքեց Սիամանթոյի «Պարը» (The Dance) եւ Պ. Սեւակի «Մենք Քիչ ենք, բայց հայ ենք» (We are few, but we are called Armenians) բանաստեղծութիւններուն անգլերէն թարգմանութիւնը:*

*Հանդիսութեան փակումը կատարեց գեղարուեստական յայտագրի պատասխանատու, տաղանդաշատ պարուհի եւ պարուսոյց Շաքէ Մէյճըր-Ջիլինկիրեան, որ հրաւիրեց ներկաները ձեռք-ձեռքի բռնած հայ ժողովուրդի յաւերժութիւնը խորհրդանշող «Կեանքի շրջանակ» ծիսապարը կատարել:*

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**
**massis2@earthlink.net**

# ՄԱՐՈՒՍԸ

ՌՈՒՏԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Քաղաքի ամենամարդաշատ փողոցներից մէկում միշտ աշխուժութիւն էր տիրում: Լայն ու երկարաձիգ պողոտան միշտ լեցուն էր երթեւեկութեան եւ ամենատարբեր տեսակի մեքենաներով, հեծանիւ-մոտոցիկլներով, հետիոտն բազմախուռն անցորդներով, մայթերի վրայ խումբ-խումբ հաւաքուած մարդկանցով եւ խանութներից անդադար հնչող բազմազմուկ երաժշտութիւններով: Երբ ես այնտեղ էի լինում, զմայլւում էի տեղի անցեալում եւ ներկայում կառուցուած բազմաոճ շէնքերի գեղեցկութեամբ, որոնց ճարտարապետական իւրօրինակ լուծումները իսկապէս ոգեկոչում էին ինձ: Հիանում էի իւրաքանչիւր շէնքի առանձնայատուկ հնարքներով՝ հարթաքանդակներով, բարձրաքանդակներով, ցայտաքանդակներով, ծաղկաքանդակներով, շէնքերի վերնամասերի ձեւաւոր աւարտներով, կամարներով, ներկերի եւ գոյների համադրութիւններով եւ միշտ նոյն զգացումն էի ունենում, որ գուրգուրանքով պէտք է հոգ տարուեն ու լաւ պահպանուեն այդ չքնաղատես շինութիւնները, որպէս մարդկային ստեղծագործ մտքի հրաշալիքներ: Դիտում էի շուրջս հիացումով, նաեւ ափսոսանք զգում, որ այդպիսի կենտրոնում իրենց օրերն էին անցկացնում անիմաստ թափառողները, մուրացիկները, անօթեւան մարդիկ, հարբածները, ձեռքերի վրայ մանր-մունր առարկաներ վաճառողները, աղտոտ գետնին, միշտ նոյն տեղում ամուր նստած թմրադեղեր վաճառողները, ծոյլ-անբանները, մարդիկ, որոնք խոչընդոտում եւ պղտորում էին անցեալի փառաւոր միջավայրը: Ուզում էի չնկատել այդ մարդկանց եւ հրապուրուել միայն վեհ երկնասլաց նորակառոյցներով, որոնց անկարելի էր չնկատել ու չհմայուել, սակայն շրջապատում յանկարծակի սկսւում էր հրմշտոցը, հայհոյանքները, գոռում-գոչիւնները, քաշքշուկները, մէկը միզում էր պատին դարձած, միւսը շուռ էր տալիս աղբով լեցուած աղբամանը, իսկ թմբկահարող երիտասարդը, անհաղորդ շրջապատին՝ շարունակում էր նոյն միատոն ռիթմիկ թակոցներով հրապուրել անցորդներին, որպէսզի նրանց ուշադրութեանը արժանացնէր փող հաւաքելու նպատակով գետնին դրած իր գլխարկը, իսկ մայթի վրայ, խանութից դուրս բերուած ապրանքների վաճառողուհին, ձեռքում բռնել էր մեծ պլաստիկ գաւաթ եւ պարունակութիւնը հաճոյքով ըմպելուց յետոյ, առանց երկմտելու, այն ուժով շպրտում է քայլողների ոտքերի տակ: Անցորդները մռայլ դէմքերով շրջանցում են նրա կողմը, բայց նրանցից ոչ մէկը չի համարձակւում մի բան ասել նրան: Շրջապատում նմանատիպ մարդիկ շատ կային եւ նրանցն էր իշխանութիւնը: Ես շարունակում էի դիտել շուրջս՝ կարդում էի կառոյցների վրայ եղած logogram-ները, խորհրդանշանները, եւ շէնքերի հիմնադրման մասին տեղեկութիւնները:

Անփոյթ տեսքով մի կին, ուսերի վրայ բեռնած, տղամարդու գօտիներ էր վաճառում: Նա մօտենում էր անցորդներին եւ խնդրում, որ գնէին: Մարդիկ թեքում էին իրենց գլուխներն անտարբեր եւ հեռանում էին, իսկ կինը դեռ շարունակում էր կանչել նրանց ետեւից ու համոզել նրանց: Վարժուած փողոցներում քարշ գալով փող վաստակելուն, նա դժգոհելու պատճառ չէր տեսնում իր գործելաձեւի մէջ՝ այդ այն էր ինչ ինքը կարող էր անել իր տուեալներին համապատասխան եւ հաշտուել էր փողոցի պայմաններին: Նա արհամարհւում էր գնել չուզողների կողմից եւ անիմաստ դարձնում իր օրը: Ես կանգնած դիտում էի եւ մտքումս նրան համեմատում միւս կանանց հետ, որոնք գնումներ էին կատարում ամբոխաշատ փողոցի խանութներից եւ գոհ զուարճախօսութեամբ քայլում էին առաջ՝ չզգալով ո՛չ յոգնութիւն, եւ ո՛չ էլ օրուայ շոգը: Մարդիկ շա՜տ տարբեր են լինում...

Այդ կինն իմ անցեալի յուշերն էր արթնացնում: Նա յիշեցնում էր ինձ մեր հեռաւոր երկրում ապրող ճարպիկ Մարուսին, վաճառողուհի նոյնպէս, հնարագէտ , գործունեայ եւ իր նպատակներին հասնելու պայքարի մէջ՝ չնահանջող: Նրա անունը Մարուս էր, անորոշ տարիքով, անորոշ արտաքինով եւ անորոշ իր անցեալով... Յիշում էի, թէ ինչպէս Մարուսի ընտանիքը շուտափոյթ տեղափոխւում էր իրենց նոր վարձած բնակարանը: Դրացիները լարուած, կասկածոտ անհանգստութեամբ զննում էին նրանց իրենց պատուհանների թափանցիկ վարագոյրների ետեւից: Իհարկէ, նրանք չէին ցանկանայ իրենց անդորրը խանգարող մէկը ապրեր իրենց կողքին: Այդ շրջանում դժուար էր վարձու սենեակ գտնելը: Այդ յաջողուել էր Մարուսին, միջնորդի բարեխօսութեամբ, համբերատարութեամբ ամիսներ սպասելուց յետոյ: Մարուսը գոհ էր եւ շտապում էր անմիջապէս տեղաւորուել: Դա խաղաղ, անաղմուկ անկիւն էր, ուր, մեծ մասամբ, գիտութեամբ զբաղուող մարդիկ էին ապրում, որոնք աշխատում էին նաեւ գիշերները, լապտերների լոյսերի տակ, երբ պատուհաններից ներս էր թափանցում սարերի զովն ու ծառերի սօսափիւնները եւ վանում քունը նրանց աչքերից: Ցերեկուայ ընթացքում, համարեա՛ միշտ, բակում հանդարտութեան վեհաշունչն էր զգացւում: Ոչ նման քաղաքի այլ փողոցների, այդտեղ՝ բակում, աշխոյժ խաղացող շատ երեխաներ չէին հաւաքւում: Նրանք իրենց տանը զբաղուած էին լինում դաշնամուր կամ այլ երաժշտական գործիքներ նուագելով կամ իրենց պատշգամբներում բալետի շարժուձեւերը փորձելով: Յաճախակի լսելի էր լինում մէկի սոպրանօ ձայնի կրկնուող, բայց ոչ ձանձրացնող երգի փորձերը, որը լրացում կամ անփոփումն էր տալիս այդ միջավայրի գործունեայ առօրեային:

Բարետես մարդը պէտք է, որ կնոջը ամուսինը լինի, չէ՞ս կարծում,_ասաց կինը իր կողքին կանգնած երիտասարդին՝ ետ մղելով թափանցիկ վարագոյրի ծալքերը:

Բայց մի՞թէ...

Բարձրահասակ ու հմայիչ... կարծես զինուորական պաշտօնեայ լինի... Ասում են ուսումներ ստացած, խելացի ու սիրուած մարդ է:

Որտեղի՞ց գիտէին...

Լսել էին... Քամին լուրն արդէն հասցրել էր նրանց եւ անհամբեր էին տեսնելու նրանց:

Մարուսը ներքուստ գոհ էր: Նա ունէր երկուորեակ աղջիկներ, իր նախկին ամուսնութիւնից, եւ լաւ միջավայրում նրանց մեծացնելը նրա համար ամենակարեւոր եւ հիմնական մտահոգութիւնն էր: Մարուսը կեանքի որոշ փորձեր ունէր եւ զգուշաւոր էր լինելու միջավայրի մարդկանց նկատմամբ: Նա երբեւիցէ առիթ չէր ստեղծելու, որ իրենց մասին չար խօսէին: Ընդհակառակը, իր աշխատանքային փորձերից գիտէր ինչպէս յարաբերուէր տարբեր տեսակի մարդկանց հետ, եւ լաւ երեւալը իր մտքում հիմնաւորած պայման էր: Ինքը աշխատանքի էր գնում վաղորդեան զովին եւ վերադառնում ուշ ժամերին: Նա տանը քիչ էր լինում, աշխատում էր քաղաքի ամենախանդավառ, ամենամարդաշատ պողոտայի վրայ, անցորդներին վաճառում էր որոշ տեսակի քաղցրաւենիքներ եւ զովացուցիչներ:

Ընդարձակ մայր հրապարակից սկիզբ առնող այդ պողոտան նշանաւոր հնագոյն կենտրոն էր: Այն հրապուրիչ զբօսավայր էր շատերի համար եւ գալիս էին քաղաքի գրեթէ բոլոր կողմերից: Պողոտան սալայատակուած էր քարերով եւ ռազմական քայլարշաւի երաժշտութիւն էր հնչում բազմահոծ քայլողների ոտքերի հարուածներից: Այնտեղ էր գտնւում քաղաքի կենտրոնական կինոթատրոնի ամենամեծ շէնքը, եւ շատերը նախընտրում էին նոր ցուցադրուող շարժապատկերները դիտել հենց այդտեղ, որպէսզի յաջորդ օրը, իրենց աշխատատեղերում, զրուցելու աշխոյժ նիւթ ունենային այդ մասին: Շատերն էլ, պարզապէս սիրում էին զբօսնել պողոտայի երկայնքով, հանդիպել ծանօթ մարդկանց եւ ազատօրէն խօսել ամէն ինչից՝ օրուայ կարեւոր լուրերից, նորաձեւութիւններից, իրենց հոգսերից, նորութիւններից, կատարած գնումներից, ոմանք էլ սիրում էին մնալ ու լինել այնտեղ մինչեւ ուշ երեկոյ կամ գիշեր եւ աշխոյժ մթնոլորտի ուրախութիւնը վայելել: Ուրեմն, այդ պողոտայի մայթերով քայլում էին եւ՛ երիտասարդները, եւ՛ մեծահասակները, փոքրերը՝ ծնողների հետ, տարբեր լեզուներով խօսող, իրենց երկրի բնական տարազներով օտարերկրեայ զբօսաշրջիկները, մայր հրապարակ այցելողները, կենտրոնական ամենամեծ վաճառատնից գնումներ կատարողները եւ նրանք, ովքեր սիրում էին նստել նստարաններին ու դիտել իրենց կողքից անցնող անցորդներին:

Մարուսի առեւտուրը շատ յաջող էր ընթանում այդ բազմամբոխ, աշխոյժ քայլուղու ճամփեզրին եւ աննկատ դառնում օրէնքը պարտադրող մարդկանց աչքերից: (Այդ երկրում արգիլուած էր փողոցի մայթերի վրայ որեւէ առեւտրով զբաղուելը:) Մարուսը իր ճարպկութեամբ, կամ գուցէ իր եղբօր միջոցով, շարունակում էր մնալ եւ գործել այդ միջավայրում: Նրա գնորդները խստապահանջ չէին եւ չէին անդրադառնում Մարուսի արած դրամական հաշիւներին: Տօնական պողոտան՝ աղմկոտ, ծիծաղ-կատակներով լեցուն, ուրախ ժամանցավայր էր: Մարդկանց հոսքը խանութներից ներս ու դուրս եւ մայթերին, փարթամ ծառերի զով ստուերում, շարունակ շարժման մէջ՝ փոփոխւում էր, մինչդեռ Մարուսը լարուած ու տարուած հետեւում էր փող վաստակելու իր մշտապահանջ ձգտումին եւ ինքնամոռաց իր տեսքին ու պահուածքին՝ նա իր միտքը գործադրում էր իր առեւտրի յաջող ընթացքի վրայ: Նա ստեղծել էր շահոյթի իրեն յարմար միջոցը եւ գոհ էր իր գործելակերպից: Նա տարրական դպրոցի բաւարար ուսում չունէր եւ լաւ տեղեակ չէր անգամ պարզագոյն թուաբանական չորս գործողութիւններով հաշւումներ կատարելուն, աշխատանքային փորձով գտել էր խառը թուերը իր մտքում արագօրէն ամբողջացնելու, ամբողջ թուեր դարձնելու վարպետութիւնը: Մարուսը իր ետեւում կանգնած ունէր իր պաշտպանը՝ աճպարարի պէս ճկուն եւ ճարտար իրաւաբան եղբօրը, որն ամէն օր որսում էր գեղեցկադէմ նորահաս աղջիկների ընկերակցութիւնը եւ երբեւիցէ չէր մտադրւում ամուսնանալ նրանցից որեւէ մէկի հետ:

Մարուսի երկորեակ դստերերի հոգատարութիւնը մշտապէս իր վրայ էր: Իր ամուսինը՝ Վարդգէսը, յուսադրելի չէր: Նա հիւրի նման կամ կար, կամ՝ չկար: Որպէս բազում ուսում ստացած արժանաւոր մարդ, նա միշտ բարձր պաշտօններ էր վարել՝ եղել էր պատերազմում եւ շատ անգամներ էլ՝ բանտերում: Նա փոխուել եւ աւրուել էր, գուցէ, հենց այդ պատճառներով: Նա խիստ խմող եւ հարբեցող մարդ էր դարձել եւ չունէր իր ընտանիքը ղեկավարելու պատասխանատուութեան զգացումը: Նա չէր անհանգստանում կրկին անգամ բանտարկուելուց, քանի որ նա այնտեղ՝ բանտում էլ, միշտ պաշտօն էր ստացել ու անհոգ խմելու առիթներ ունեցել: Տանը նա, կարծես, սպասողական վիճակում էր, հիւրի պէս, ժամանակաւոր եւ չէր մտահոգւում ընտանեկան որեւէ հարցով: Նա ոչ բարկացկոտ, խաղաղ բնաւորութեամբ երջանիկ-անհոգ էր: Հասկանալի չէր, թէ ինչն էր այդ գիտուն մարդուն այդպէս անտարբեր դարձրել եւ «աչք անգամ չունէր ոչ մի բանի նկատմամբ:» Նրա երջանկութիւնը միայն խմելն ու հարբելն էր, երբ մոռանում էր նաեւ իր շրջապատի մարդկանց գոյութիւնը՝ իր կնոջը եւ տանը ապրող Մարուսի դստերերին: Աղջիկները, իրենց մօրը խորհրդով, տանը չէին մնում, երբ Վարդգէսը ընկերների հետ խնճոյք էր կազմակերպում:

Այնուամենայնիւ, այլ նկարագիր ունէր Վարդգէսը արթուն վիճակում: Նա բարեխիղճ, կարեկցող, ընկերասէր, ընկերական, մարդասէր անձնաւորութիւն էր համարւում իր աշխատանքի վայրում: Հիմնարկութեան, համարեա՛ բոլոր աշխատողները, սիրում եւ գնահատում էին նրա մեծահոգութիւնը: Վարդգէսը գիտէր, որ կարիքաւորները հիմնարկութեան արտադրանքից տուն էին տանում որոշ, ոչ մեծարժէք, խոհանոցային փոքրիկ, գործածական, անհրաժեշտ իրեր: Նա զիջում ու չտեսնելու էր տալիս: Վարդգէսը չնչին բաներ համարելով դրանք, տեղի էր տալիս եւ փոխարէնը ինքն էր տուժւում եւ բանտարկւում: Բանտից ազատուելուց յետոյ, զարմանալիօրէն, երբ նրան կրկին ղեկավար պաշտօն էին յանձնարարում ու նրան վստահում, նա նոյն ձեւով էր վարւում եւ նորից բանտարկւում իր բարեխղճութեան համար: Մարուսը գիտէր, որ Վարդգէսը ժամանակաւոր ամուսին էր եւ շատ չէր տագնապում նրա բացակայութեան համար: Նա աւելի շատ մտածում էր իր դստերերին ապահով մեծացնելու, նրանց ապագայի,

Շար.ը էջ 20

## ԻՆՔԶԻՆՔԴ ՃԱՆՉՆԱԼ ՍԻՐԱԾ ԳՈՅՆԵՐՈՒ ՄԻՋՈՑՈՎ

1. Ճերմակ: Ասիկա բոլոր գոյներու համադրութիւնն է, անոր համար ալ կը համարուի խոճալական գոյն կամ «երազանքի գոյն»: Անոր մէջ կայ բազմանշանակ իմաստ, քանի որ միաժամանակ կ՛արտացոլացնէ ե՛ւ լոյսի փայլը, ե՛ւ սառոյցի սառնութիւնը: Այս գոյնին նախապատուութիւն կրնայ տալ իւրաքանչիւր բնաւորութեան մարդ. անիկա ոչ մէկը կը վանէ:

2. Սեւ: Այս գոյնը կրնայ յառաջացնել անհանգիստ վիճակ եւ կը նոյնացուի ժխտական երեւոյթի հետ: Անիկա կը խորհրդանշէ կեանքի տխուր ընկալումը: Անոնք, որոնք կը նախընտրեն սեւ հագուիլ, յաճախ կ՛ընդունին կեանքը մռայլ գոյներով, վստահութիւն չունին իրենք իրենց վրայ, դժբախտ են եւ ընկճուած, քանի որ չեն կասկածիր, որ խոճալները կեանքի մէջ անհասանելի են: Սեւ հագուստի փոխարինումը այլ գոյնով մը՝ աւելի վառով, կ՛ենթադրէ, որ վատատեսական տրամադրութիւնները տեղի տուած են:

3. Մոխրագոյն: Խելամիտ եւ չվստահող, որեւէ որոշում կայացնելէ առաջ երկար խորհրդածող մարդոց սիրած գոյնն է: Այս գոյնը կը նախընտրեն նաեւ անոնք, որոնք կը վախնան իրենց մասին շատ բարձր յայտարարելէ: Մարդիկ, որոնց համար այս գոյնը հաճելի չէ, ունին թեթեւամիտ բնաւորութիւն:

4. Կարմիր-կրքերու գոյն: Մարդը կ՛առանձնանայ արիութեամբ, կամքի ուժով, իշխողականութեամբ, բռնկողականութեամբ, շփուողականութեամբ, այլասիրութեան հակումով, եթէ ան կը սիրէ այս գոյնը: Այն մարդիկ, որոնց կրնայ ջղայնացնել այս գոյնը, զարգացած են թերարժէքութեան բարդոյթով:

5. Նարնջագոյն: Զարգացած յայտնատեսութեամբ եւ կրքոտ երազողներու սիրած գոյնն է: Այս գոյնը կը մատնանշէ նաեւ երեսպաշտութիւնը եւ կեղծիքը:

6.Շագանակագոյնը եւ անոր բոլոր երանգները: Կը նախընտրեն անոնք, որոնք պինդ եւ հաստատուն կանգնած են ոտքերու վրայ: Մարդիկ, որոնք թուլութիւն ունին այս գոյնի նկատմամբ, կը գնահատեն աւանդութիւնները եւ ընտանիքը: Գոյնի հաճելի չըլլալը կը խօսի եսասիրութեան եւ ծածկամտութեան մասին:

7. Դեղին: Կը խորհրդանշէ հանգստութիւն, անկաշկանդութիւն մարդոց հետ յարաբերութիւններու մէջ: Մարդիկ, որոնք կը սիրեն այս գոյնը, կ՛առանձնանան շփուողականութեամբ, հետաքրքրասիրութեամբ, արիութեամբ: Անոնք կը յարմարին ամէն ինչին, կը սիրեն հաճելի թուիլ եւ իրենք իրենց վրայ ուշադրութիւն յառաջացնել: Այս գոյնը հաճելի չէ ինքնամփոփ, յոռետես մարդոց, որոնց հետ դժուար է ծանօթութիւն հաստատել:

8. Բաց կանաչ-մարդատեացներու եւ ցինիկներու գոյն: Այս գոյնը հաճելի կը թուի իշխող բնաւորութեամբ մարդոց, որոնք կը ձգտին իրենց կամքը թելադրել ուրիշներուն, բայց ռիսքի չեն դիմեր՝ վախնալով ըլլալ դժուար կացութեան մէջ:

9. Վարդագոյն- կեանքի եւ ամենայն շնչաւորի գոյնն է: Ասիկա կը խօսի սիրելու եւ բարի ըլլալու անհրաժեշտութեան մասին: Անոնք, որոնց համար հաճելի է այս գոյնը, հակուած են անհանգստանալու ամենաչնչին առիթով:

10. Մանիշակագոյն: Կը խօսի շատ բարձր յուզականութեան, զգայունութեան, բարձր հոգեւոր հարստութեան եւ նրբանկատութեան մասին: Ասիկա ներդաշնակ, զարգացած մարդոց գոյնն է: Այս գոյնը չեն տանիր պարտքի զգացումով մարդիկ եւ անոնք, որոնք կը փափաքին ապրիլ միայն ներկայով:

11. Կապոյտ: Քանի որ ասիկա երկնքի գոյնն է, ուստի յաճախ կը կապուի մարդու հոգեւոր վեհութեան եւ մաքրութեան հետ: Անոր նկատմամբ հակումը կը խօսի համեստութեան եւ մելամաղձոտութեան մասին: Այսպիսի մարդիկ պէտք է յաճախ հանգստանան, անոնք շատ արագ եւ դիւրին կը յոգնին, անոր համար ծայրայեղօրէն կարեւոր է վստահութիւնը ինքն իր նկատմամբ եւ շրջապատի բարեացակամութիւնը: Անոնք, որոնք այս գոյնը չեն ընդունիր, կը փափաքին ցուցադրել, որ աշխարհի վրայ ամէն ինչ իրենց ենթակայ է: Բայց ըստ էութեան, անոնք անվստահ եւ փակ մարդիկ են: Այս գոյնի նկատմամբ անտարբերութիւնը կը խօսի զգացումներու մարզին մէջ յայտնի թեթեւամտութեան մասին՝ թաքնուած քաղաքավարութեան դիմակի ետին:

12. Կանաչ-բնութեան, բնականի, կեանքի, գարնան գոյն: Ան, որ կը նախընտրէ այս գոյնը, կը վախնայ օտար ազդեցութենէ, կը փնտռէ ինքնահաստատման միջոց, քանի որ ատիկա անոր համար շատ կարեւոր է: Իսկ ան, որ չի սիրեր, կը վախնայ կենցաղային խնդիրներէն, ճակատագրի անակնկալներէն եւ ընդհանրապէս բոլոր դժուարութիւններէն:

## ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԵԼԱՒՈՂ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

Հետազօտողները ապացուցած են, որ բնական մեղրը ի վիճակի է ուղեղին մէջ աշխուժացնելու ինչպէս տեղեկատուութեան իւրացման գործընթացները, այնպէս ալ ստացուած գիտելիքներուն պահպանումը՝ շնորհիւ այնտեղ պարունակուող դիւրին իւրացուող ածխաջուրերու, որոնք «վառելանիւթ» են գորշ բջիջներու համար:

Մեղրը կը հանէ նաեւ վտանգի զգացողութիւնը: Գիտնականները ասիկա փորձած են կրծողներու վրայ:

Երկրորդ տեղը հնդկացորենն է: Անիկա կը պարունակէ մեծ քանակով թեթեւ իւրացուող երկաթ: Անհրաժեշտ է ուղեղին՝ կեդրոնանալու համար: Այդ տարրով հարուստ են նաեւ հասուն նուռը, կանաչ խնձորը եւ սեւ հացը:

Երրորդ տեղը կը գրաւեն պինդ պանիրները: Անոնք կը պարունակեն շատ քալսիում եւ դրիփդօֆանի ամինաթթուներ:

Չորրորդ տեղը ձուկն է եւ ծովամթերքը: Ձուկի, յատկապէս ճարպոտ տեսակներուն մէջ կան բազմաթիւ չյագեցած ճարպաթթուներ՝ օմեկա-3: Անոնք «կը լուծեն» քոլեսթերոլն ու անօթները կը պահեն աշխոյժ վիճակի մէջ: Ձուկին մէջ կայ նաեւ ֆոսֆոր, որ նոյնպէս կարեւոր է յիշողութեան համար:

Հինգերորդ տեղը կոճապղպեղն է. Անիկա կը պարունակէ գաբսաիցին, որ կը խթանէ գլխուղեղի արեան շրջանառութիւնը՝ նոյնիսկ ամենամանր անօթներու մէջէւ կը հանէ սփազմը:

## ԻՆՉՊԷ՞Ս ԵՒ ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՆԱԽԱՆՁԻՆ ՏՂԱՄԱՐԴԻԿ ԵՒ ԿԻՆԵՐ

Միշտ ալ կիներ եւ տղամարդիկ կը նախանձին իրարու՝ հակառակ անոր, որ երբեմն ատոր համար ոչ մէկ պատճառ կայ:

Ինչո՞ւ կը նախանձին տղամարդիկ

Տղամարդիկ շատ բուռն կը նախանձին: Նոյնիսկ եթէ անոնք չեն արտայայտուիր, բայց այդ զգացումը ամբողջովին տակնուվրայ կ՛ընէ անոնց ներաշխարհը: Նոյնիսկ եթէ կինը այլ տղամարդ մը, իբրեւ ընկեր, կը համբուրէ, ուրեմն տղամարդու հոգիին մէջ կարմիր լոյս կը վառի, եւ ան կրնայ նախանձի տեսարան բարձրացնել: Իսկ ասիկա բացասական ազդեցութիւն կ՛ունենայ յարաբերութիւններու յետագայ զարգացման վրայ:

Նման պարագայի տղամարդը այնպէս կը կուրնայ, որ հաշուի չ՛առներ, թէ ով է ան՝ հաւանաբար կնոջ մանկութեան եւ ամենամտերիմ ընկերն է եւ այլն:

Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ կը նախանձին կիներ

Տարածուած կարծիք կայ, որ կիներ աւելի նախանձոտ են եւ անգամ տղամարդու՝ գործընկերուհիին ուղղուած շնորհաւորանքն ու մաղթանքը կրնայ նախանձի առիթ հանդիսանալ կնոջ համար: Հաւանաբար այդ պահուն ան ոչինչ ըսէ, սակայն հարկ եղած պարագային՝ կինը անպայման կը յիշեցնէ այդ մասին:

Իսկ ինչո՞ւ կը նախանձի կինը: Իւրաքանչիւր կին ի սկզբանէ ունի մէկ առաքելութիւն՝ սերունդ պարգեւել: Բայց այդ առաքելութիւնը իրականացնելու համար անհրաժեշտ է տղամարդ, որուն ան ամէն գնով կը փորձէ պահել իր կողքին: Եւ եթէ տղամարդը կը հմայուի այլ կնոջմով, ուրեմն ոչ միայն զաւակ ունենալու առաքելութիւնը կը դառնայ դժուար իրագործելի, այլեւ ոտնատակ կ՛ըլլայ կանացի արժանապատուութիւնը: Հետեւաբար, իւրաքանչիւր կնոջ համար առաջին հերթին պէտք է, որ տղամարդը իր կողքին ըլլայ եւ հոգ տանի իրեն եւ զաւակներուն:

Տղամարդու եւ կնոջ նախանձը շատ տարբեր երեւոյթներ են:

Տղամարդու համար կարեւոր չէ, թէ ինչ կ՛երազէ կամ կը մտածէ կինը: Անոր համար էական նշանակութիւն ունի այն, որ կինը միայն իրմէ զաւակներ ունենայ: Տղամարդը միշտ կը վախնայ, որ կինը կրնայ յիմարացնել զինք, որուն իբրեւ արդիւնք կրնայ մեծցնել ուրիշի պարգեւած զաւակը: Ասիկա աղէտ է տղամարդուն համար: Սակայն այս պարագային պէտք է ընդունիլ, որ նախանձը բաւական բնական զգացում է, եւ բնական է, որ բաժանման պատճառ դառնայ

## ԻՆՉՊԷՍ ՍԻՐԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԸ

Սովորաբար ինքնագնահատականը մեր մէջ կը սերմանեն մեր ծնողները: Սակայն, մենք միշտ հնաւորութիւն ունինք բարձրացնելու մեր ինքնագնահատականը եւ աւելի շատ սիրելու սեփական անձը: Իսկ ինչպէ՞ս:

Ես միակն եմ ինծի համար: Ուրիշը չկայ: Մարդոց սովորաբար բնորոշ է այն պատրանքը, որ իրենք կ՛ապրին իրենց ամուսինի, հարազատներու եւ ընկերներու հետ: Սակայն իրականութեան մէջ անոնք միայնակ են: Հետեւաբար, իւրաքանչիւրը պէտք է աշխատի եւ օգնէ ինքն իր ինքնագնահատականը բարձրացնելու հարցով: Ան կրնայ վերանայիլ յարաբերութիւնները եւ հասկնալ, որ ամէն պարագայի իրմէ աւելի լաւ ոչ մէկը կայ այս աշխարհի վրայ:

Թօթափել անցեալի բեռը: Սովորաբար փոքրերը մշտապէս կը փորձեն ապացուցել իրենց ծնողներուն, թէ որքան լաւ են:

Նոյնիսկ երբ անոնք կը մեծնան ու կը դառնան հասուն մարդիկ, եւ ծնողները արդէն մահացած են, լաւը երեւնալու «ծրագիրը» դեռ հիմնաւորուած է անոնց մէջ: Մարդը սովորաբար կը խուսափի միւսներու վատ կարծիքէն եւ կը փորձէ մշտապէս դրական ու լաւ թուիլ: Սակայն ինքնագնահատականը բարձրացնելու համար պէտք է հաւաքել անցեալի հետ կապուած բոլոր վատ յիշողութիւնները, լեցնել «զամբիւղ»-ի մը մէջ եւ դուրս նետել:

Երկխօսութիւն հայելիին առջեւ: Չկայ կին մը, որ լիովին

գոհ է իր արտաքին տեսքէն: Նոյնիսկ գեղեցկուհիները կրնան ճնշուիլ՝ մէկ բշտիկի պատճառով: Խնդիրը այն է, որ հայելիին նայելու ժամանակ բոլորը սովորաբար կը նկատեն իրենց թերութիւնը, եւ ատկէ կը տուժէ անոնց ինքնագնահատականը:

Ամէն օր հայելիին առջեւ կանգնելով եւ թերութիւնները տեսնելով պէտք է ըսել, որ զանոնք կարելի է հարթել, շտկել, չէ՞ որ ան ուժեղ կամք ունի եւ կրնայ յաղթահարել այդ փոքրիկ խնդիրը:

Եթէ ես աստուածուհի ըլլայի...Շատ կիներ կ՛ապրին մտածելով, որ «եթէ ես աստուածուհի ըլլայի, ուրեմն իմ ոտքերը, ձեռքերը, ականջները գեղեցիկ պիտի ըլլային, եւ բոլորը պիտի սիրէին զիս» մտքով: Սակայն ինքնավստահ կիներ այդպէս չեն կարծեր: Անոնք կրնան նայիլ հայելիին, տեսնել իրենց թերութիւնները եւ գովել իրենք զիրենք ատոր համար:

Փորձեցէք հետեւիլ անոնց օրինակին: Փոխեցէք գեղեցկութեան չափանիշները ձեզի համար: Ապրեցէք այնպէս, որ կարծէք դուք գեղեցկութեան խորհրդանիշ էք միւսներու համար: Յիշեցէք, նորաձեւութեան միտումները միշտ անցողիկ են: Փորձեցէք ձեր բնական գեղեցկութիւնը ցուցադրել եւ դառնալ գեղեցկութեան չափանիշ միւսներուն համար:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Շարունակուած էջ 5-էն

Այս կապակցութեամբ կառուցման մէջ է նաեւ Թիմնայի նոր օդակայանը որ թերեւս թիրախ դառնայ ահաբեկիչներու համար: Վերոյիշեալ պատնէշի երկարութիւնը պիտի ըլլայ 16 մղոն (մօտ 25 քիլոմետր):

## ԻՐԱՔԵԱՆ ՕԴԱՆԱՒ ՄԸ ՍԽԱԼՄԱՄԲ ՌՄԲԱԿՈԾԱԾ Է ՊԱՂՏԱՏԸ

Տահէշի դէմ կատարած ռմբակոծումներէն տուն վերադարձան իրաքեան օդուժին պատկանող ռազմական օդանաւ մը, «սխալմամբ» խանգարում մը ունենալով ռմբակոծումի ենթարկած է Պաղտատի արուարձաններէն մարդաբնակ թաղամասի մը վրայ: Պաշտօնական հաղորդագրութեան մը համաձայն կան 16 մեռեալներ եւ վիրաւորներ, ինչպէս նաեւ քանդուած են 3 տուներ: Կազմուած է կառավարական քննիչ յանձնախումբ մը, բացայայտելու արկածին տուն տուող պատճառը: Գալով «Սօխօյ» տիպի ռազմական օդանաւի օդաչուին ենթական կը նկատուի իրաքեան օդուժի լաւագոյն եւ փորձառու օդաչուներէն մին:

## ԿԱՏԱՂԻ ԿՌԻՒՆԵՐ ՍՈՒՐԻԱ-ԼԻԲԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Վերջին երկու շաբաթներուն ահեղ մարտեր տեղի կ'ունենան Սուրիա Լիբանան սահմանամերձ շրջաններուն վրայ: Արդարեւ Հըզպալլայի զինեալները պաշարման օղակի մէջ առած են Քալամունի լեռնային շրջանի երեք քառորդ մասը: Շիիթներու մեծամասնութիւնը ներկայացնող եւ սուրիական իշխանութիւններու համակրանքը վայելող զօրականներու բացատրութիւնն այն է որ իրենք Լիբանանի սահմաններու այս շրջանը կը պաշտպանեն Տահէշի ահաբեկիչներու հաւանական յարձակումներէն:

## ԹՈՒՐՔԻՈՅ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ՍՈՒՐԻՈՅ ՎՐԱՅ

Թուրքիա մեծապէս զայրացած է Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, քանի որ այս վերջինը ռազմական օժանդակութիւն կու տայ Սուրիոյ Քիւրտերուն, մասնաւորաբար Քիւրտերու Միութեան Դեմոկրատ Կուսակցութեան: Արդարեւ այս վերջինը համակիր կը նկատուի Թրքական Քիւրտիստանի Աշխատաւորներու Կուսակցութեան: Թուրքիոյ համաձայն վերոյիշեալ երկու կուսակցութիւններն ալ ահաբեկչական կազմակերպութիւններ կը համարուին: Ուստի սպառնալիքներ են Թուրքիոյ համար:

Ըստ Թուրքիոյ ներխուժում մը կենսական է զսպելու համար քիւրտերու միասնութիւնն ու գործակցութիւնը, սակայն նման պարագային Թուրքիա արտաքին աշխարհին համար պիտի նշէ թէ իր պայքարը Տահէշի դէմ է եւ ոչ թէ քիւրտերու:

## ՀԱԼԷՊԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ»-Ը Կ'ՈՒՇԱՆԱՅ

Շարունակուած էջ 7-էն

շարունակուի:

Հալէպի ճակատամարտը, որ ընդդիմութեան կարեւոր «երազանքներ»էն մէկն յստակ չէ, թէ երբ կրնայ բռնկիլ: Ու տակաւին անորոշ է, որ նոյն Հալէպի ճակատումը իշխանութեան կա՞մ ընդդիմութեան իսլամական խմբաւորումներուն միջեւ պիտի պատահի:

Սուրիոյ պատերազմին այս փուլը նոր քարտէզներու գծագրման փուլն է: Պայմանով, որ խաղին մասնակից բոլոր հիմնական ուժերուն փափաքը ի կատար ածուի եւ այդ փափաքը տկար, անօրինական, բզկտուած եւ վիրաւոր Սուրիոյ մը երեւումն է: Ի վերջոյ Սուրիոյ պատերազմը կրնայ նահանջել երբ այս պայմանները լրացուին:

## ՊԱՏՃԱՌ ԵՒ... ՀԵՏԵՒԱՆՔ

Շարունակուած էջ 6-էն

կայանալու եւ հաշուետու ըլլալու հրաւէրը...»:

Հիմա ժամանակները այլ են, այլ է նաեւ մեր խելացի ու խիզախ, ազատամիտ ու արժանապատուութեան բարձր գիտակցութեամբ զինուած երիտասարդութիւնը: Անոնք ամէն օր ու ամէն ժամ կ'ապացուցեն իրենց տրուած գնահատականներուն իսկութիւնը. երկրի սահմանները պահպանելու ատեն, համաշխարհային մշակութային բեմահարթակներու վրայ, շախմատային ողիմպիականներու ընթացքին ու քաղաքականութեան մէջ:

...Ու, եթէ մեր միջին կարգի պետական ծառայողները ի վիճակի չեն համարժէք պատասխան տալ չափը անցած, թէկուզ բարեկամ, բայց ուրի՛շ երկրի պաշտօնեային, թող իրենց տեղը զիջին երիտասարդներուն: Անոնք վստահաբար կը գտնեն պատասխան տալու ձեւը:

Ոչ ոք, ոչ թշնամին, ոչ առաւել եւս բարեկամը իրաւունք ունին մեր սեփական տան մէջ մեզմէ աւելի տանտէր ըլլալու....

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ ՈՐԲ ՉՊԻՏԻ ԼԻՆԵՆ

Շարունակուած էջ 14-էն

ռուցուած է հայ ժողովրդի հիմքի վրայ, հայերի կապիտալի հիմքով:

- Վերջին խորհրդարանական ընտրութիւններում ընտրուել են 3 հայ պատգամաւորներ: Թուրքիայի հայ համայնքը ի՞նչակնկալիքներ ունի հայ պատգամաւորներից:

- Ակնկալիքներ ունենք այն առումով, որ խորհրդարանում կան 3 հայ պատգամաւոր, եւ նրանք կը ներկայացնեն հայ համայնքի խնդիրները: Նշեմ նաեւ, որ 3 հայ պատգամաւորները տարբեր կուսակցութիւնների անդամներ են, եւ միայն այդ 3 հոգին չեն, որ կուսակցական ցանկերում հայ էին: Դա մեզ համար մեծ նշանակութիւն ունի: Դրանով հարթւում է հայի ու թուրքի միջեւ եղած խորականութիւնը:

Հարցին միւս կողմից նայելով, ակնկալիքներ չունենք, որովհետեւ 500 մանդատ ունեցող խորհրդարանում 3 մանդատը ոչինչ է: Ուրիշ գաղափարներ ունեցող պատգամաւորները, անշուշտ, չեն կարողանալու հարցեր լուծել:

Կարեւորը 3 պատգամաւորը չէ, կարեւորը թուրք ժողովրդի հասկացողութիւնն է: Եթէ ժողովուրդը ունենայ հասկացողութիւն, ապա ցեղասպանութեան հարցն էլ կը լուծուի:

**Save the Date**

NOV. 7, 2015-Saturday, St. Peter Church Ladies Society 57th Annual Fashion Show and Luncheon, One Hundred Years and Flourishing, at Four Seasons, Westlake Village, CA

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

WESTERN DISTRICT COMMITTEE

2015 GALA

SATURDAY, SEPTEMBER 26, 2015

SAVE THE DATE

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books

Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ

Հին Գիրքերու Նորոգութեան Համար

Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104

Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924

vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Լոս Անջելես քաղաքի բնակարանավորման իշխանություն

Հանրային բնակարանների սպասման ցուցակի թարմացում

Լոս Անջելես քաղաքի բնակարանավորման իշխանությունը (HACLA) պիտի թարմացնի իր ավանդական Հանրային բնակարանների ծրագրին վերաբերող սպասման ցուցակը
(սա Հատված 8 ծրագիրը չէ):
Սպասման ցուցակի թարմացման ծանուցագրերը փոստով առաքվում են Հունիսի 29, 2015 թվից և դիմողները պարտավոր են պատասխանել մինչև Հուլիսի 29, 2015 թիվը:
Չպատասխանող դիմողները դուրս կթողնվեն սպասման ցուցակից:
Եթե դիմել եք Հանրային բնակարանների համար և ծանուցագիր չեք ստանում, խնդրում ենք դիմել Ավանդական դիմումի կենտրոն երկուշաբթիից ուրբաթ, կ.ա. 8:00-ից կ.հ. 4:00-ը

HACLA Conventional Application Center
2600 Wilshire Blvd – 1st Floor
Los Angeles, CA 90057
(213) 252-1020

EQUAL HOUSING OPPORTUNITY

Հանրային բնակարանների ավանդական սպասման ցուցակը մնում է բաց և ընդունվում են դիմումներ (սա Հատված 8 չէ):

# ՄԱՐՈՒՍԸ

*Շարունակուածէջ 17-էն*

քան թէ Վարդգէսի մասին: (Սակայն, նա աչքաթող էր անում կարեւորը՝ խստօրէն չէր հետեւում երկուորեակների ուսուման առաջընթացքին:)

- Ահ, ինչ ասեմ, տանում են՝ թող տանեն... եթէ մարդիկ կարիքի մէջ են, կը տանեն,- ասում էր Վարդգէսը վստահօրէն: -Ի՞նչ ասեմ ես նրանց,-նա երբեք չէր փորձում վշտացնել որեւէ մէկին: Նա սիրում էր տալ, նուիրել եւ օգնել մարդկանց եւ դրանով էր իրեն երջանիկ զգում:

Վարդգէսը վէճեր էր ունենում տանը, բայց շարունակում էր նոյն ոգեւորութեամբ ընկեր դառնալ աշխատաւորներից մի քանիսի հետ եւ որոշ օրեր աշխատանքի չէր գնում եւ տուն էր հրաւիրում նրանց, որ տղաներով «ազատ, սրտանց, ուրախ քեֆ քաշէին» մինչեւ Մարուսի աշխատանքից տուն վերադառնալը, իհարկէ, եթէ տանը ունենում էին ուտելիք՝ հաւը, Մարուսի հալթալթածը՝ իր երեխաներին սնելու համար: (Հաւը միշտ չէր վաճառւում խանութներում: Մարուսը այն ձեռք էր բերում իրեն ծանօթ վաճառողների միջոցով:)

Բանտում, թէ որտեղ, Վարդգէսը սովորել եւ ինքն էր պատրաստում հաւը: Մէկ հաւը բաւարար էր միայն իրեն, բայց ընկերների հետ եղած ժամանակ, նա այդ զիջում էր նրանց եւ ինքը բաւարարւում էր միայն հացով եւ խմիչքով: Վարդգէսը ուտում էր հաւն ամբողջութեամբ, նաեւ կրճիկներն ու կրծում ու ծամում ոսկորները:

Վարդգէսը հսկայ մարդ էր, գերանի պէս ուղիղ, ամուր: Նա բարետես մարդ էր, ծաղկատար կլոր դէմքով, նոսրացած մազերի միշտ կոկիկ կողքի սանրուածքով: Նա իր հագին, տարիներ շարունակ, կրում էր նոյնատիպ զինուորական, գեներալին յատուկ բաճկոնակը՝ առանց շքանշանների, փակ, կոճկուած օձիքով, որը նրան շատ հմայիչ ու աւելի գրաւիչ էր դարձնում:Նոյնիսկ շատ հեռուից կարելի էր նշմարել նրան՝ տուն վերադարձին, եւ կռահել նրա տրամադրութիւնը: Զգաստ վիճակում նա ուշագրաւ տղամարդ էր, երբ ուղիղ եւ ձիգ էր քայլում, իսկ երբ հարբած էր լինում, նրա հսկայ ուղղահայեաց մարմինը ճօճւում եւ թեքւում էր թեթեւ քամուց փլւող շիւղի նման: Այդ վիճակում էլ նա բարկացկոտ չէր լինում, ընդհակառակը, նա աւելի ծիծաղկոտ էր դառնում: Այդ ծիծաղով նա տարբերւում էր աշխարհի բոլոր մարդկանցից: Նրա ծիծաղը արտասովոր էր, արտերկրեայ, գլորասահ, զօրեղ, ռիթմիկ, երկարատեւ տեւում էր մինչեւ իր շունչի հատնելը, երբ դէմքն ամբողջութեամբ կարմրում էր եւ աչքերը արցունքոտւում էին: Նրա այտերի վրայ շողում էր Մարուսի հետ «կատակելու» ցանկութիւնը, որը նրա մշտական պահանջն էր՝ Մարուսին այպանելու ճիշտ առիթն ու պահը:

- Մարուս, ա՛յ կնիկ, դու ճանճ ես, ճանճ, հրճւում էր նա շեշտելով նոյն «ճանճ» բառը: Նա չէր ծաղրում կամ նկատի չունէր Մարուսի կարճ հասակ ունենալը, դա արդէն այդպէս էր: Վարդգէսին ամենաշատը վրդովւում էր Մարուսի քիչուս առեւտրականի անազնիւ գործելակերպը եւ ուզում էր միշտ յիշեցնել, խոցել նրան: Փորձում էր, բայց կարո՞ղ էր, արդեօք, փոխել Մարուսին, երբ նա արդէն մոլեռանդ առեւտրական որպէս, գտել ու մշակել էր վաստակելու իր հեշտ ուղին...

- Ես չեմ հասկանում քեզ... այ կնիկ... -բարի ժպիտով ասում էր Վարդգէսը,- այնուամենայնիւ, դու լաւ էլ գլուխ ես հանում... Ես չգիտեմ, թէ Ինչպէ՞ս ես անում քո հաշիւները... պարզ է, աւել չես տալիս երբեք, բայց պակաս ես տալիս, գիտես, հաշիւներդ արագ ես անում, բայց ինչպէ՞ս է որ չես վրիպում... հա՜,հա՜, հա՜, հա՜... Այ քեզ տաղանդաւոր... Գնորդներդ ոչինչ չեն ասում, լուռ հեռանում են, բայց նրանք հասկանում են չէ՞... նրանք չեն գանգատւում, որ իրենք չտխրեն , որ իրենց լաւ օրը չկորցնեն, դու էլ բաւարարւում ես քո յաջողութիւններով, դա է չէ՞... - Վարդգէսը այս նոյն խօսքերով այպանում էր Մարուսին նաեւ ուրիշների ներկայութեամբ, որոնք արդէն գիտէին Մարուսի բազում հնարամտութիւնների ու ճարպկութիւնների մասին: Մարուսը բոլորովին չէր վրդովւում: Նա Վարդգէսի ասածները ընդունում էր որպէս հարբած մարդու շատախօսութիւն կամ՝ գովասանք իրեն, որ քիչ ուսումով ինքը կարողանում էր իր գործը առաջ տանել եւ փող վաստակել, ընտանիքը պահել:

Մարուսը, երբ տանն էր լինում, տօնական կամ ազատ օրերին, նա ձգտում էր համակերպուել ամուսնու հետ եւ քիչ երջանիկ լինել: Նա խուսափում էր վէճերից, աղմուկներից, որ լինում էր շաբաթուայ ընթացքում՝ հաւը ընկերներին հիւրասիրելու համար: Նա չէր ուզում հարեւանների ուշադրութեանն արժանանալ: Նա իր աղջիկներին ուղարկում էր ինչ-որ մէկի տուն եւ գեղեցիկ պարեղանակի տակ Վարդգէսին ոտքի էր հանում՝ պարելու: Վարդգէսը իր բազկատարած թեւերով գրաւում էր սենեակի արդէն նեղ տարածքը եւ, թռիչքի պատրաստ օդանաւի նման, Մարուսին թեւատակին առնելով՝ օրօրւում էին իրենց տեղերում պտտուելով:

- Ճանճ ես, այ կնիկ, ճա՜նճ... - հռհռում, քրքջում, ծաւալւում էր Վարդգէսն ինքնամոռաց, որը նշան էր արդէն, որ նա հարբած-երջանիկ վիճակումն էր: -Մարուսը դժգոհ չէր, Վարդգէսը տանը իր հետ էր, իր կողքին, թէկուզ հարբած, բայց ոչ իր ընկերների հետ խմելիս:

Մարուսը շատ յաճախ դաշտային խրախճանքներ էր կազմակերպում եւ արժանիներին մասնակից դարձնում, որպէսզի Վարդգէսին պահէր իր ընտանիքի հետ եւ աղջիկների համար առիթ ստեղծուէր տանից դուրս գալու եւ շփուելու մարդկանց հետ: Մարուսը պարում էր առաջինը եւ ոգեւորում էր միւսներին: Նա վեր էր ցատկում իր նստած տեղից եւ երկու ձեռքերը բարձր օդում թափահարելով, հագուստի լայն փէշերը ծածանելով՝ ցատկոտում էր երգելով բոլորին ծանօթ հին պարեղանակը եւ ձեռքերով նշան տալիս նստածներին, որ մասնակցէին, ձայնակցէին իրեն եւ ոտքի ելնէին պարելու:

- Ելէ՛ք, ելէ՛ք, ի՞նչ էք նստել, բոլորդ էլ ելէք մի բան արէք եւ ուրախացէք: Այս գեղեցիկ օրը, երբ բոլորս այստեղ զով ծառի ստուերում, կանաչ խոտի վրայ փռուած սեղանի շուրջը նստած՝ միասին ենք եւ ուրախ , էլ ուրիշ ի՞նչ աւելի լաւ բան կը լինի յիշելու, երբ մօտիկ հոսող առուակ էլ կայ եւ զեփիւռ եւ արեւի փափուկ ջերմութիւն, եւ ուտելիք,-գեղեցկախօսութեամբ ոգեւորում էր Մարուսը միւսներին եւ պտտւում Վարդգէսի հետ: Նա ուզում էր տեսնել աշխոյժ շարժում, լսել ուրախութեան աղմուկ-աղաղակի ձայներ, իսկ երբ նստում էր Վարդգէսի կողքին, լաւ հոգ էր տանում նրան, զանազան ուտելիքներ էր մատուցում, որ շեղեր նրա ուշադրութիւնը խմիչքի պահանջից, ոգեւորւում էր զրուցելով ներկայ եղողների հետ, ներկայացնում էր իր աղջիկներին:

Մարուսը նոյնը չէր, սակայն, աշխատանքային օրերին: Աշխատանքի հետ կապուած երբեմն դէպքեր էին պատահում: Այդ մասին նա տանը երբեք չէր խօսում, յոգնած ու զբաղուած էր ձեւանում, մտքում էր ալեկոծւում եւ մտքում էլ որոշում ու ձեւակերպում իր հետագայ անելիքներն ու ասելիքները: Նա շուտ ընկճուող չէր, առույգ էր, հարմարուող ու տոկացող:

-Ի՞նչ է, ձեզ հետ չի պատահո՞ւմ...- անմիջապէս իր դիրքն էր ապահովում Մարուսը: -Մարդ եմ, կարող եմ սխալուել չէ՞, կարող եմ մոռանալ, չէ՞: Ահա՛, վերցրէք ձեր մանր դրամներն ու հեռացէ՛ք: Եւ այստեղ այլեւս չերեւա՛ք, -կարճ եւ անկաշկանդ պատասխանում էր Մարուսը եւ միայն այդ դէպքում էր, որ մանր դրամները վերադարձնում էր նրանց:

Մարուսի կեանքը իրականում հեշտ չէր: Նա ինքն էր պահում իր ընտանիքը իր վաստակած գումարով եւ վճարում տան վարձը: Աղջիկները մեծանում էին Մարուսի ուշադիր հսկողութեան տակ: Նա վարժեցրել էր նրանց մնալ ներսում եւ դուրս չելնել, երբ Վարդգէսն արդէն բանտում էր: Այդ ժամանակ Մարուսն աւելի լաւ էր զգում իրեն: Նա, ինչպէս միշտ, ապահովում էր աղջիկների բոլոր անհրաժեշտ կարիքները, նոյնիսկ, երբ դրանք չէին գտնւում խանութներում (իրեն ծանօթ գործաւորների միջոցով էր ձեռք բերում իր ուզածները:)

Մարուսը գնահատում էր շրջապատի մարդկանց արժանիքները եւ միշտ ձգտում էր լաւ երեւալ նրանց աչքերում: Նրանք մի օր պէտք էին գալու իրեն: Նա կարծում էր, որ իր աղջիկները այդ տան միջավայրում լաւ ապագայ էին ունենալու եւ մտածում էր աւելի շատ նրանց երջանկութեան, քան իր ամուսնու բացակայութեան մասին: Մարուսը համբերատար էր իրեն ցոյց տալիս, բայց եւ այնպէս, նրա աչքերից չէին վրիպում առօրեայի, չնչին թուացող, փոքրիկ մանրունքները: Նա զգօն էր եւ չէր սիրում, երբ իր հիւրերից մէկը փորձում էր մօտիկ խօսել իր ամուսնու հետ: Դա երբեք տանելի կամ համբերելու առիթ չէր Մարուսի համար: Նա դառնում էր զայրացկոտ ու անկառավարելի, ինչքան էլ որ ցանկանար զուսպ լինել: Այդպիսի վիճակ նա ունեցել էր, եւ իր հարեւանները տեսել էին իրեն ու զարմացել: Իրենց փողոցի անկիւնում քամուց վեր բարձրացող նրա գունաւոր հագուստի փէշերը երեւացել է հեռուից, երբ Մարուսը զայրացած գետին է տապալել իր հակառակորդին եւ լկտի հայհոյանքներ ասելով՝ իրար մազեր են քաշքշել: Այդ օրը Մարուսը տուն է վերադարձել արիւնոտուած դէմքով, իսկ ընկերուհին՝ չի վերադարձել: Նրան բանտ են տարել: Իրաւաբան եղբօր անիրական փաստերով, Մարուսը վրէժ էր լուծել եւ նրա ընտանիքը քայքայել: Իր այդ արարքը Մարուսը չէր թաքցնում եւ աւելի համարձակ էր զգում իրեն եւ ուժեղ:(Մարուսին չէին սիրում Վարդգէսի հարազատները: Նրանք՝ բոլորն էլ, բարձր կրթութիւն ստացած լաւ մարդիկ էին, կտրել էին իրենց կապը Վարդգէսի հետ՝ Մարուսի պատճառով:)

Որոշ ժամանակ անցել էր, եւ Մարուսի ընտանիքը տեղափոխուել էր մի ուրիշ բնակավայր: Երկար տարիներ սպասելուց յետոյ, վերջապէս, նրանց տրուել էր բնակարան՝ նորակառոյց պետական հսկայ մի շէնքի ութերորդ յարկում: Մարուսը գոհ էր, բայց դեռ ոչ այնքան երջանիկ: Մի բան՝ նոյնքան կարեւոր ու հրատապ, դեռ կար իր մշտական մտածումների ցուցակում: Դա իր դստրերի ամուսնութեան հարցն էր: Մարուսի ջանքերով, նախապէս, նրանց տրուել էր բնակուելու մեծ տարածք, նկատի ունենալով, որ միատեղ բնակուելու էին նաեւ Մարուսի աղջիկների ընտանիքները, (եթէ նրանք ամուսնացած լինէին:) Իրականացուել էր Մարուսի երազանքի մի մասը, բայց շարունակութեան համար նա դեռ պայքարելու էր, որ չկորցնէր եղածը: Նա պէտք է շտապել, պէտք է արագ գործել: Պէտք է ամուսնացնել իր դստրերին, որ պահէր նրանց համար նախապէս տրամադրուած բնակարանի հատուածը: Մարուսը ծանօթ էր իրենց գիւղի տղաներին: Առանց ժամանակ կորցնելու, նա գիւղի մի երիտասարդի հետ անմիջապէս ամուսնացրել էր իր աղջիկներից մէկին, իսկ միւսի հարցը այնքան էլ հեշտ չէր ստացուել:

Մարուսը չէր կարող շուտ մոռանալ իրենց ապրած հին տունն ու տանտիրուհուն: Աւելի յաճախ քան առաջ, նա այցելում էր նրանց : Նա գնահատում էր այդ տան միջավայրը եւ տեղի մարդկանց: Նա առաւել եւս զգում էր նրանց հետ մօտիկ լինելու պահանջը եւ չէր յապաղում այցելել նրանց: Մարուսը աննպատակ այցելութիւններ չէր կազմակերպում, նա չէր կարող իր աշխատանքային կարեւոր ժամերը վատնել անիմաստ գործերի համար: Նա ունէր իր անմիջական մտադրութիւնները եւ պէտք է իրագործել: Նա փախուստ էր տալիս իր աշխատանքից եւ ներկայանում տանտիրուհուն՝ աւելի մօտիկ կապեր ստեղծելու մտադրութեամբ: Տանտիրուհին սիրով ընդունում էր նրան: Մարուսն էլ սիրով հրաւիրում էր նրանց՝ տեսնելու իրենց նոր բնակարանը:

(Շարունակելի)


ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680